# ԼՈՅՍ ԱՅԳԻՆ

Հիշողություն հայրենադարձության մասին՝
մեկ ընդմիջումով. ընդմիջման տեղը՝ բեմադրիչի
նաշակով:

*ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ*
*ԱՄԵՐԻԿԱՀԱՅ*
*ՀՈՒՆԱՀԱՅ*
*ԻՐԱՆԱՀԱՅ*
*ՊՈԼՍԱՀԱՅ*
*ՍՈՒՐԻԱՀԱՅ*
*ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ*
*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ*
*ԹԻՖԼԻՍԱՀԱՅ*
*36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ*
*ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ*
*ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ*
*ԿԱՐՃ ՇԱԼՎԱՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ*
*ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ*
*ՍՏԵՓԱՆ*
*ՈՒՍԱՆՈՂ*
*ՀՐԱՆՈՒՇ*
*«ԹՈՒՐՔ» ՄԱԿԱՆՎԱՄԲ ԳՈՂ*
*ՄԱՐՈՒՍ*
*ԱՆԴՐ՝ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԼԵՅՏԵՆԱՆՏ*
*ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ*
*ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ*



*ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒ*
*ԳՆՈՐԴ*
*ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ*
*ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ*
*ԲԵՐԻԱ*
*ԲԱՂԻՐՈՎ*
*ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ*

Ու նաև.

Հին և նոր հայրենադարձներ՝ կանայք, տղամարդիկ, մանուկներ: Երևանցիներ: Երկու սանիտար: Կոլտնտեսոտ: Սրունքապաններով հայրենադարձ, Ջառամյալ հայրենադարձ:

Գործողությունները տեղի են ունենում 1947 թվականին, Երևանում:

Երևանի Լենինի անվան հրապարակի պուրակը: Հենց կենտրոնում կանգնած է շոգեքարշը՝ նակատին Ստալինի մեծադիր դիմանկարը: Նրա տակ՝ տրանսպարանտ. «Փառք հայ ժողովրդի մեծ բարեկամ Ստալինին»: Բեմի երկու կողմերում, ծառերի միջև՝ զբոսայգու երկարբե ոտքերով նստարաններ: Ծառերի հետևում զանվում է նասարակական զուգարանը, որը չի երևում: Նրա գոյությունը հասկացվում է զբոսայգու այցելուների հաճախակի այդ կողմը գնալ-գալուց:

Խուճապահար բեմ է ընկնում Բուլղարահայը և, շուրջը նայելով, փորձում է բարձրանալ շոգեքարշի վրա, չտապելուց չի ստացվում, մտնում է գնացքի տակ: Նրա հետևից գալիս են Առաջին և Երկրորդ խուժանները:

*ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Ո՞ւր կորավ...*
*ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ* (շուրջը նայելով).— *Վաղամի էն տեղը...*
*ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ* (իր չորս կողմը).— *Արա՛, ախպա՛ր, դո՛ւրս արի, թե չէ հետո ավելի վատ կեղնի...*
*ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ* (ծոցից հանելով ֆիննական դանակը).— *Մեկ ա, ձեռքիցս չես պրծնի...*

Խուժանները տեղավորվում են այգու նստարանին ու սպասում: Ծառերի արանքից դուրս է գալիս Մարուսը՝ ուղղելով իր շրջազգեստը:

*ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ* (Մարուսին).— *Քուրս, նստիր քովս...*
*ՄԱՐՈՒՍ* (թքելով նստարանին).— *Խոսիր հետը մինչև ես գամ...*

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (վրդովված ու դեռևս կարգին չհասկանալով).— Ո՞ւմ հետ խոսեմ, բո՛զ...

ՄԱՐՈՒՍ.— Թքիր հետ, բոզի տղա բոզ...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (վեր թռչելով).— Արա, ես քո՛ւ...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ (բռնելով նրա թևից).— Դինջ մնա...

Մարուսը հեռանում է:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Թո՛ղ, ես դրա...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Գիտե՞ս ով ա...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Ով ուզում ա ըլի...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Թուրքի քածն ա...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (փոքր-ինչ նվաղելով).— Թուրքի՞...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Հա... (շշուկով) ինքն էլ էստեղ ա... Լավ կըլլի ցանվենք:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (հեռանալով նայում է շոգեքարշի կողմը).— Արա... ախպար... էդ գարշոկդ դեն գցիր, թե չէ մյուս անգամ ձեռքիցս չես պրծնի...

Խուժանները գնում են: Արդեն շոգեքարշի վրա հայտնվում է Բուլղարահայը: Զգուշորեն է նայում և սրբում դեմքի քրտինքը:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Գնացին... (Իր գլխից հանում է լայնեզր գլխարկը, տնտղում՝ հիացմունքով նայելով նրա վրա, նորից դնում գլխին: Ապա հայացքը գցելով իր թե նեռուն, կարոտով նմանակում է շոգեքարշի սուլոցը): Տո՛ւ... տո՛ւ... տո՛ւ... տո՛ւ...

Երևում է միլիցիայի լեյտենանտ Անդոն:

ԱՆԴՈ (երկար դիտելուց հետո).— Էդ ի՞նչ ես ձենդ գցել, ընկեր հայրենադարձ...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Ների՜մ...

ԱՆԴՈ (սպառնալով).— Դեռ տեղ չես հասե՞լ...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Հասեր եմ... հասեր:

ԱՆԴՈ (երկիմաստ).— Հա՛ա...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Հարկավ... հասեր եմ:

ԱՆԴՈ (խոժոռ քաշելու միտումով).— Ո՞ւր:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Հայրենիք:

ԱՆԴՈ.— Բա էլ ինչի՞ ես «տուտու» անում:



ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Կուրախանամ:

ԱՆԴՈ (զարմացած).— Ինչի՞ վրա...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Երջանկությանս... Որ հայրենիք եկած եմ վերջապես... Շնորհակալություն Մեծն Ստալինին:

ԱՆԴՈ (երկար նայում է՝ չգիտենալով ինչ ասել).— Լավ... Իսկ ինչի ես պարավոզի վրա բարձրացել...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Մասիսը կդիտեմ...

ԱՆԴՈ.— Այսինքն՝ արտասահման...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ (վախեցած).— Ոչ, ինչ կըսեք... Հայրենիքիս սիմբոլը... (Պաշտպանվելու ավելի ճարպիկ ձևը գտնելով): Մեկ ալ... որ ամենեն գլխավորն է, Լենինի արձանին կնայիմ...

Անդոն չգիտե այժմ ինչ ասի, հազում է և դուրս գնում: Աղմուկով, իրար մեջ խոսելով՝ բեմ են մտնում հայրենադարձները՝ Ֆրանսահայը, Ամերիկահայը, Լիբանանահայը, Հունահայը, Իրանահայը, Սուրիահայը: Նրանցից ամեն մեկը դեռևս իր երկրի բնորոշ հագուստով է, և խումբը շատ խայտաբղետ տեսք ունի:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (տեսնելով շոգեքարշի վրայի Բուլղարահային).—Մո՛, Տոդոր, աս ինչո՞ւ ելեր ես շոգեքարշին վրա...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Հայաստանը աս է... Ուրիշ տեղ այլևս չկա... Իջիր, պե՛...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ (ուրախ, ցույց տալով իր լայնեզր գլխարկը).— Ասոր պատճառով... Կըսեն՝ հանե...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ինչո՞ւ...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Հոս աս գլխարկը չեն սիրեր:

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Է թող չսիրեն... Իրե՞նց գլխուն վրա է...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ասիկա, իշտե, Ասիա է, ճանըմ... (ինքն իրեն կսկծալով): Մայրս կըսեր՝ ո՞ւր կերթաս, մանչս... Հայաստանը Եվրոպա չէ... Հայաստանը Ասիա է...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ես շատունց գիտեմ... Ի՞նչ կա որ...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ոչ Ասիա է, ոչ ալ Եվրոպա: Հայաստանը Հայաստան է: (Գրպանից հանում է օղու փոքրիկ սրվակը և դնում բերանին):

ԻՐԱՆԱՀԱՅ (ձեռ առնելով). Ասա՝ առանձին աշխարհամաս է, էլի...

ՍՈՒՐԻԱՀԱՅ (սրվակը վերստին դնելով գրպանը).—Անշուշտ... առանձին աշխարհամաս մըն է:

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Այս աշխարհամասին մեջ լայնեզր գլխարկը արգիլված է։*

*ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Է, դուն ալ հանե, ճանըմ... Ըսված չ՝ որ երկիրը երթաս, անոր գլխարկը դիր գլխուդ...*

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Ոչ։ Ես ամեն բանին համաձայն եմ, մինակ ոչ ատ կարծիքին։ Կրնամ քարտով հաց առնել, կրնամ անոթի մնալ, կրնամ «ախպա՛ր» մականունը ամեն օր լսել... մինակ թե աս գլխարկը գլխուս ըլլա։ Ես առանց աս գլխարկի չեմ կրնար ինքզինքս մարդ զգալ...*

*ՀՈՒՆԱՀԱՅ* (ակտիվ միջամտելով).*— Դուք ըսեք՝ տուն տվի՞ն...*

*ԻՐԱՆԱՀԱՅ* (անձայն ծիծաղելով).*— Ի՞նչ տուն։*

*ՀՈՒՆԱՀԱՅ.— Ինչո՞ւ կխնդաս, ծո՛... Տունը չե՞ս գիտեր ինչ է... Պարսկաստան տունի մեջ չե՞ն ապրիր...*

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ* (իջնելով շոգեՓարշից).*— Հոն՝ Սոֆիային մեջ բանալիներ ցուցանեց խորհրդային Հայաստանին ներկայացուցիչ ընկեր Մարտիրոսյանը... Հոս պարզ դարձավ, որ ատիկա Չեկային բանալիներն են եղեր։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Սո՛ւս, ծո՛, ինչ կըսես։* (Զորս կողմը աչք ածելով): *Տակավին չսորվեցա՞ր խոսելու ձևը։*

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ* (նոր զգալով իր անզգույշ խոսքը, վախեցած).*— Մարդ չկա... Մերոնք են...*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ* (շշուկով, ականջին).*— Մերոնք ո՞վ են, ծո... Հոս մերոնք-ձերոնք չկա... մերոնքը ձերոնք կդառնան, ձերոնքը՝ մերոնք...*

*ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Է, ի՞նչ ըսի... Ըսի՝ առանց աս գլխարկի չեմ կրնար ապրիլ...*

Այդ ընթացքում նստարաններից մեկի վրա հավաքվել էին մի քանի հայրենադարձ, որոնց մեջ էր նաև Սև վերարկուով միլիցիոները, ու զբաղված էին թղթախաղով: Հանկարծ ոտքի է ելնում Սև վերարկուով միլիցիոները, գցում իր վրայի վերարկուն՝ նայտնի դարձնելով իր ով լինելը: Նրա ետ խաղացողները, դրամները թողնելով նստարանին, այս ու այն կողմ են փախչում: Միլիցիոները հասցնում է բռնել երկուսի օձիքներից:

*ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ* (հրամայական).*— Վերցրե՛ք փողերը։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատ դրամները իմս չեն։*

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Էդ ո՞նց։*



*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Քուկդ են։*

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Ի՞նչ ասի՛ր...*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Դուն ինձմե շահեցիր...*

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Վերցրե՛ք, ասում եմ։*

*ՏԱՐԵՑ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ* (տարակուսանքով).*— Է, դուն չէի՞ր խաղար մեզի հետ։*

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ* (ձեռքը տանելով ատրճանակի դատարկ պատյանը).*— Ես ձեզ ցույց կտամ։*

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ* (լացակումած).*— Ջգե, հորեղբայր, դուն հայ չե՞ս...*

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ* (ավելի բորբոքվելով, շատ խիստ).*— Ի՛նչ ասիր... Տո՛, դաշնակցակա՛ն տականք... Նացիոնալի՛ստ...* (խստագույն): *Փողերը վերցրե՛ք, ասացի...* (Առանց թողնելու նրանց օձիքները, մի կերպ սուլիչը դնում է բերանը և սուլում):

*ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ* (գլուխը բոլորովին կորցրած).*— Կառնեմ... Կտեսնաս կոր՝ կառնեմ...*

Սև վերարկուով միլիցիոները, նրա գլուխը սեղմելով, իջեցնում է նստարանին: Երիտասարդ հայրենադարձը՝ քիթ ու բերանը նստարանին կպած, վերցնում է թղթադրամները:

*ՍԵՎ Վ. ՄԻԼԻՑԻՈՆԵՐ* (տարեց հայրենադարձին).*— Դու էլ վերցրու... կարտերն էլ վերցրու...*

Տարեց հայրենադարձն էլ է վերցնում դրամների մի մասն ու խաղաթղթերը: Սև վերարկուով միլիցիոները՝ երկուսի օձիքներից բռնած, տանելով):

*Բուրժուական նացիոնալիստներ... Ես ձեզ «հայ» ցույց կտամ...*

Դուրս են գնում: Մնացած բոլորը սսկվել են տարբեր տեղերում: Ու լռության մեջ, կամաց-կամաց, իրարից խուսափելով, հեռանում են: Գալիս են Ստեփանն ու Ուսանողը:

*ՍՏԵՓԱՆ.— Էստեղ լավ տեղ է...* (Շուրջը նայելով): *Ափսոս մարդ չկա...*

*ՈՒՍԱՆՈՂ.— Լավ է, չեն խանգարի։*

*ՍՏԵՓԱՆ.— Սիրում եմ, երբ տարբեր լեզուներով են խոսում... Մանկուց երազել եմ չորս լեզու իմանալ...*

*ՈՒՍԱՆՈՂ.— Ի՞նչ լեզուներ։*

ՍՏԵՓԱՆ.— Լատիներեն, հին հունարեն, գերմաներեն և գրաբար։

ՈՒՍԱՆՈՂ.— Գրաբարը հո հայերեն է։

ՍՏԵՓԱՆ.— Չէ, հայերեն չի։ Գրաբարը գրաբար է։ Ուրիշ մարդկանց լեզու է։ Շուրջդ նայիր, որևէ մեկը կարո՞ղ է խոսել գրաբար։ Գրաբարը ուրիշների լեզուն է։ Հիմա գրաբարի մարդիկ չկան։

ՈՒՍԱՆՈՂ.— Հետաքրքիր մարդ ես։

ՍՏԵՓԱՆ.— Ասա՝ հետաքրքրասեր։

ՈՒՍԱՆՈՂ.— Եվ հետաքրքրասեր։ Շուտով իմ առարկաները ինձանից լավ կիմանաս։ Լսիր, իսկ ինչո՞ւ ինստիտուտ չես ընդունվում։ Ինձ հետ ես չարչարվում։ Ես ինչ կարող եմ քեզ սովորեցնել։

ՍՏԵՓԱՆ.— Չորրորդ դասարանի կրթություն ունեմ՝ մեկ, հետո էլ... (ժպտում է)։ Հետո էլ՝ երկար պատմելու է... Իսկ ինչ տարբերություն... Դու ինստիտուտ ես, էլի... Ինչ-որ սովորեցնում են, դու ինձ սովորեցրու... Ավելի բան պետք չի ինձ...

ՈՒՍԱՆՈՂ.— Լավ... էսօր ի՞նչ առարկա ես ուզում...

ՍՏԵՓԱՆ.— Էսօր առարկա պետք չի... Էնպես, փիլիսոփայությունից խոսի... Դու լավ ես պատմում։

ՈՒՍԱՆՈՂ.— Ինչ մի դժվար բան է որ... Խելոք ցիտատները ընդգծում եմ, արտագրում... Հետո քեզ կարդում։

ՍՏԵՓԱՆ.— Լավ ես ընդգծում... Ընդգծելն էլ քիչ բան չի։

ՈՒՍԱՆՈՂ.— Լավ։ (Գրպանից հանում է ծոցատետրը։ Սկսում է թղթատել)։

ՍՏԵՓԱՆ,— Փողից-բանից ո՞նց ես...

ՈՒՍԱՆՈՂ (ճաշվելով).— Շնորհակալ եմ։ Անցած անգամ տվածդ դեռ չեմ ծախսել։

ՍՏԵՓԱՆ.— Սովա՞ծ ես մնում... Հացի կիլոն յոթանասուն ուբլի արժե, էդ ո՞նց ես ծախսում... (Մեղմ, զգուշավոր)։ Հետո քո աղջկա վրա չե՞ս ծախսում... Աղջկա վրա ծախսել է պետք... օրենք է։

ՈՒՍԱՆՈՂ (ժպտալով).— Հերիք է անում։

ՍՏԵՓԱՆ.— Էն ո՞նց էր, անցյալ անգամ կարդացածդ։ Մտքիցս դուրս չի գալիս։

ՈՒՍԱՆՈՂ.— Ո՞րը, Եզոպո՞սը...



ՍՏԵՓԱՆ.— Չէ։ Արգելվածը։

ՈՒՍԱՆՈՂ (ցածրաձայն).— Դոստոևսկի՞ն...

ՍՏԵՓԱՆ.— Հա... էն ոնց էր։

ՈՒՍԱՆՈՂ.— Ո՞ր մեկը։ Դոստոևսկին շատ բան ունի։

ՍՏԵՓԱՆ.— Սատանայի մասին։

ՈՒՍԱՆՈՂ (ծոցատետրի մեջ գտնելով էջը, կարդում է).— Это просто маленький, гаденький золотушный бесенок с насморком, из неудавшихся.

ՍՏԵՓԱՆ.— Ոնց է, է՜... Հարբուխով սատանա, անհաջողակ... (Տխրում է)։ Կարո՞ղ է՝ մենք բոլորս սատանաներ ենք՝ մեծ, պստիկ, հարբուխով, ծաղկատար, վախկոտ, քաջ... հը՞... (ծիծաղում է)։

ՈՒՍԱՆՈՂ (Ստեփանին հանձնելով ծոցատետրը).— Վերցրու... Քեզ համար արտագրածներս են...

ՍՏԵՓԱՆ (վերցնելով ծոցատետրը՝ թղթատում է, կարդում).— «Այս աշխարհում կատարյալ ոչինչ չկա, բացի դժբախտությունից»։ Բալզակ... (Մտածում է)։ Դժբախտ մարդ է եղել էդ քո Բալզակը։ (Կարդում է)։ «Քանզի «մարդասպան» և «ավազակ» հասկացությունները նրանց համար «աչքաբաց» էին նշանակում»։ Կեսարացի... էս նոր է։ Չեմ հիշում։

ՈՒՍԱՆՈՂ.— Վեցերորդ դար։

ՍՏԵՓԱՆ.— Ոնց որ էսօրվա բանը լինի... (Կարդում է)։ «Խոսքը պատկանում է ժամանակին, լռությունը՝ հավերժությանը»։ Մետերլինկ... (Երկար վայելում է կարդացածը)։ Մետերլինկ... Ո՞վ է... Առաջին անգամ ես բերել...

ՈՒՍԱՆՈՂ.— Շատ են... Անհնար է բոլորին գիտենալ...

ՍՏԵՓԱՆ (գրպանից հանում է մի բանի թղթադրամ և տալիս Ուսանողին).— Վերցրո՛ւ... Գիրք կառնես... Սիրածիդ կնայես...

Ուսանողը չեմ ու չում անելով վերցնում է դրամները, և շարունակում են զբաղվել ծոցատետրով։ Գալիս է Անդոն, չորս կողմը տնտղելով ճայլում, տեսնելով Ստեփանին՝ ճարգալից բարևում է, ու կրկին ճեռանում։ Հայտնվում է Բուլղարահայը՝ լայնեզր գլխարկը ցուցադրաբար գլխին, տեղավորվում է Ստեփանի և Ուսանողի դիմացի նստարանին, գրպանից հանում հաց ու երշիկ և սկսում ուտել։ Գալիս է Մարուսը և նստում նրա կողքին։ Հետո մեկ-մեկ բեմ են

մտնում հայրենադարձները՝ իրար հետ խոսելով, միմյանց ինչ-որ բաներ պատմելով: Ու քիչ հետո կրկին աշխուժանում է պուրակը:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (Ֆրանսահային, շշուկով).— Կըսեն՝ ձեր տղաքը կերթան Բաթում՝ սահմանը անցնելու...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (վախեցած).— Ինչ գիտնամ... Անանկ տղաք ես չեմ գիտեր:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (հիասթափված).— Դուն Ֆրանսայեն չե՞ս...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Է՛, մե՞ղք եմ գործած, որ Ֆրանսայեն եմ...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ըսին՝ խումբ մը ֆրանսահայեր կերթան Բաթում՝ սահմանը անցնելու...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (ավելի ջղայնացած).— Հասկցա, ճանըմ...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Դուն ինչո՞ւ կբարկանաս:

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Հապա դուն ինչո՞ւ ինծի կըսես... Չորս կողմ՝ Չեկայի գործակալներ, լրտեսներ... Դուն ինծի ատանկ բան կըսես... խո՞սք կքաշես... Կամ ինծմե չե՞ս վախնար...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (նույնպես բարկանալով).— Լա՛վ, լա՛վ... Ես մեղա... Ներող կըլլաք...

Ֆրանսահային մոտենում է Պոլսահայը:

ՊՈԼՍԱՀԱՅ (շշուկով).— Կխոսին թե՝ խումբ մը ֆրանսահայ Բաթում գացած է՝ փախուստ ընելու միտքով...

Ֆրանսահայը շեշտակի դառնում է Պոլսահայի կողմը և պլշած աչքերը սևեռում՝ վախից ու ջղայնությունից չիմանալով ինչ անել:

Հասկցանք... հասկցանք... (Մոտենալով Սուրիահային. շատ զգույշ): Լսե՞ր ես... Կըսեն՝ ֆրանսահայ տղաքը Բաթումին ճամփան բռներ են... (Ավելի զգույշ): Կըսեն՝ սահմանը կուզեն անցնիլ...

ՍՈՒՐԻԱՀԱՅ (զարմացած).— Ատիկա կարելի բան չէ...

ՊՈԼՍԱՀԱՅ.— Հավաստի է:

Այսպես խումբ-խումբ խոսում են այդ մասին:

ՀՈՒՆԱՀԱՅ (Իրանահային).— Առտուն դուրս ելեր են Երևանի կայարանեն, կերթան Բաթում՝ սահմանն անցնելու նպատակով...

ԻՐԱՆԱՀԱՅ (հանգիստ).— Էս երկրից փախչել կլինի՞... Չեմ հավատա...



ՀՈՒՆԱՀԱՅ.— Ինչո՞ւ չես հավատար... Իշտե գացեր են...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Հոկտեմբերյանի մոտ կբռնեն... կամ՝ Լենինականի կայարանում... կամ՝ Կիրովականում... կամ՝ Ալավերդիում... Թիֆլիսում հո անպայման կբռնեն... (Շատ կամաց): Էնտեղ Բերիայի մարդիկ են... Թիֆլիսում էլ որ չբռնեն՝ Բաթումում կբռնեն...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ծո, ինչ թերահավատ ես եղեր...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Դու որ իմացել ես ու էսպես խոսում ես, էդ ոնց պիտի լինի, որ էնկավեդեն չիմանա...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ուրկե՞ պիտի իմանար...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Էստեղ (ցույց տալով շուրջը) կեսից ավելի լրտեսներ են:

ՀՈՒՆԱՀԱՅ (հազիվ զսպելով իր պոռթկումը).— Դուն ա՞լ...

ԻՐԱՆԱՀԱՅ (անվրդով).— Հնարավոր է... Ամեն դեպքում կարող ես կասկածել... Քեզ էլ կասկածիր:

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ինչ կըսես, պեե՜...

ԻՐԱՆԱՀԱՅ (հաստատ).— Կբռնե՛ն... Չեմ նախանձում նրանց:

Կրկին երևում է Անդոն: Նայում է չորսբոլորը, Մեծ գրպաններով հայրենադարձի բիկունքից ձեռքով տնտղում է գրպանները: Հայրենադարձը հանկարծակիի է գալիս, ցատկում, տեսնելով Անդոյին՝ ժպտում է:

ԱՆԴՈ (հրամայելու պես).— Հանգի՛ստ... հանգի՛ստ...

Բեմի խորքում հայտնվում է Սպիտակ մորուքով հայը և, ամեն ինչից վերացած, ձեռքերը առաջ պարզած, երգելով գալիս է բեմի առաջնամասը:

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Կռունկ, ուստի՞ կուգաս...
Ծառա եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհեն
Խաբրիկ մը չունի՞ս... (և այլն):

Բոլորը շրջվում են նրա կողմը և լուռ նայում:

ՀՈՒՆԱՀԱՅ.— Աս մեկ տեղացին արդեն ձեռքե գացեր է...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Մեր դերդեն, Թերևս...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Հայի դարդից:

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ (շարունակում է երգել՝ խոսքերը հատ-հատ առաջելով ու անսպասելիորեն կանգ է առնում Պոլսահայի դիմաց).— Կոմիտաս վարդապե՞տ... Դո՞ւ...

(Շարունակելով երգել)։ *Կռունկ, մեր աշխարհեն...* (Եվ այլն)։

ՊՈԼՍԱՀԱՅ (շփոթված, որ իրեն է դիմում).— *Ե՞ս... Ինձի՞ կըսես...*

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ (լսելով ու, ասես, նույնիսկ, չնկատելով նրան, ասես նրա թափանցիկ կերպարանքի միջով տեսնելով Կոմիտասին).— *Դու ասիր՝ «Խաղաղվի հոգիդ»... Ինչո՞ւ... Ես այլևս մեռա՞ծ եմ...* (Շարունակելով երգել)։ *Թողել եմ ու եկել... (և այլն)։ Ես վաղուց գիտեի, որ մենք ամենքս հանգուցյալներ ենք... Մեր հոգին է կենդանի, և այն կրում են ուրիշ մարմինները* (դառնում է Ֆրանսահային, որն իրեն տեղ չի գտնում՝ ցանկանալով թաքնվել ինչ-որ բանի ետևում)։ *Վարդապետ... ասում ես՝ հոգին յուր ճամփան ունի... Հայի հոգին ճամփա է ելել ու գնում է, գնում է... Ի վերուստ մեզ հանձնված է հայի ծանր, խոշոր հոգին, որ պիտի շատ խոչուխութով, քար ու փոսից անցկացնենք ու տեղ հասցնենք՝ պահպանելով նրա գերակայությունը... Բայց ո՞րն է այդ տեղը, ո՞րն է նրա գերակայությունը, ի՞նչն է իմաստը...* (Շարունակում է երգը, ապա նորեն դիմում երևակայական Կոմիտասին)։ *Մենք հաճախ փոսն ենք ընկնում... Հիմա էլ փոսն ենք ընկած... Ասում ես, որ հոգին փոսից դուրս է, երկրից վեր... Ասել է՝ ես այլևս մարմին չունեմ... Ուրեմն՝ էլ երկիր պետք չէ ինձ, երկինք է պետք... Ամբողջ երկինքը, վարդապետ...*

Սպիտակ մորուքով հայը երգելով հեռանում է։ Բոլորը լուռ նետևում են նրան։ Նրա երգը կամաց-կամաց մարում է։

ՊՈԼՍԱՀԱՅ.— *Ինքնիրենը կխոսի խեղճը... Ամեն օր կանցնի հոսկե ու ինքնիրենը կխոսի։*

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— *Խանգարված է... Խաղաղ է այլևս... ոչ վախ ունի, ոչ վիշտ։*

Բուլղարահայը նկատում է ներս մտնող խմբաններին ու, ձեռքը գլխարկին պահած, ծլկում։ Առաջին խմբանը մոտենում է Մեծ գրպաններով հայրենադարձին, որին ստուգում էր Անդոն, ու հետևից մտնում նրա գրպանները։ Հայրենադարձը կարծում է, թե կրկին Անդոն է, ժպտում է և չի շրջվում։ Առաջին խմբանը հանում է նրա գրպանների պարունակությունը և հանձնում երկրորդ խմբանին։ Եվ



նրանք հեռանում են։ Հայրենադարձների մի մասը լուռ, սահմռկած հետևում էր նաև սրանց։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (Մեծ գրպաններով հայրենադարձին).— *Դուն բան մը չնկատեցի՞ր։*

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— *Հարկավ, իմ վրայես կրնա՞մ տեղյակ չըլլալ...*

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— *Եվ խոսք մը չըսի՞ր...*

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ուրախ).— *Ես ձեր դեմքերեն հաճույք կառնեի... Դուք ալ խոսք մը չըսիք...*

ՀՈՒՆԱՀԱՅ (մասնակցելով զրույցին).— *Քու գրպաններդ չէի՞ն...*

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— *Ես աս գրպանները ուրիշներու համար կպահեմ...*

Նրան են մոտենում Ես չորս հոգի, որոնք մինչ այդ իբր անտեղյակ էին բողոքյանը։

*Աս գրպանիս մեջ ԽՍՀՄ սահմանադրությունը կպահեմ, աս գրպանիս մեջ՝ ՀՍՍՀ սահմանադրությունը... Թուղթի տեղ... Ամենեն աժան թուղթն է...*

Բոլորը միանգամից ցրվում են։ Մեծ գրպաններով հայրենադարձը մնում է մենակ ու շվարած ու քիչ անց ինքն էլ է զգում իր ասածի վտանգավորությունը և, նվաղելով, մի կողմ քաշվում։ Գալիս են երկու ամերիկուհիներ՝ մեծ ճամպրուկներ ձեռքներին։ Ամերիկահայը, տեսնելով նրանց, մոտենում է։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (անգլերեն ինչ-որ բաներ է ասում։ Կանայք լսում են, ձեռքերը տարածում, ապա ինչ-որ բան հարցնում։ Մի քանի կողմ է ցույց տալիս, և ամերիկուհիները գնում են).— *Այս խեղճերը ի՞նչ մեղք գործած են, չեմ հասկնար...*

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— *Ի՞նչ կուզեն...*

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— *Իրենք ալ չեն գիտնար... Կքնանան կայարանին մեջ, ճամպրուկներու վրա... Զտարյուն ամերիկուհիներ են, հայ ամուսիններու հետ հոս եկած են՝ ամուսիններու հայրենիքը... Ամուսիններուն բանտարկեր են, իրենք մնացեր են Հայաստանի փողոցները... Ամուսիններու հայրենիքին փողոցները... Ոչ լեզու գիտեն կոր, ոչ ալ որևէ բան կհասկնան...*

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Բանտարկե՞լ են, կրսես...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Հոս ատ բարիքով ամբողջն ալ ապահովված կրնան ըլլալ...

ԻՐԱՆԱՀԱՅ (մոտենալով).— Էսօր առավոտ պարոն Աֆիցերյանին տարել են։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (խուճապահար).— Ո՞վ է Աֆիցերյանը։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Միշտ էստեղ էր գալիս... Խելոք մարդ էր...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (զարմացած).— Խելոք մարդ մնացե՞ր է տակավին...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ո՞ւր տարած են...

Պուրակում մարդիկ շատացել են։ Վերստին երևում է Սպիտակ մորուքով ծայր և այս անգամ վերադառնում է դեպի բեմի խորքը, ձեռքերը առաջ պարզած՝ երգելով իր երգը՝ «Կռունկ...»։

## 2

Պուրակը դատարկ է։ Միայն շոգեհարշի առաջնամասում՝ բարձրության վրա՝ Ստալինի դիմանկարի առջև կանգնած են Բերիան և Բաղիրովը։

ԲԵՐԻԱ.— Միրզայից ի՞նչ խաբար կա...

ԲԱՂԻՐՈՎ.— Նույն խաբարը։ Դարդ է անում, որ ուշացնում ենք... (Դժգոհ)։ Հեռվից հեշտ է երևում. ուր նայում է՝ դատարկություն է։ Գնում է Վան՝ հայ չկա, գնում է Էրզրում՝ հայ չկա, գնում է Կարս՝ հայի հոտ չկա։ Թող նորից գա Բաքու։ (Փնթփնթալով) Որ կողմը գլուխս թեքում եմ՝ հայ... Կիրովաբադ եմ գնում՝ հայեր, Ղարաբաղ՝ հայեր, Թիֆլիս... (Հապաղում է)։ Թիֆլիս... (Նայում է Բերիային)։

ԲԵՐԻԱ.— Մի քաշվիր, ասա... Հայե՞ր... (Ժպտում է)։ Նույնիսկ իմ թիկնապահերը հայեր են... (Ծիծաղում է)։

Բաղիրովը ևս ծիծաղում է։ Եվ նրանք երկար ծիծաղում են ու հանկարծ, ասես խոսքները մեկ արած, խոժոռվում են։

ԲԵՐԻԱ.— Ոչինչ, ամեն ինչ տեղը կընկնի։

ԲԱՂԻՐՈՎ.— Ինչ ես կարծում՝ մինչև հիսունհինգը կվերջացնե՞նք...

ԲԵՐԻԱ.— Ավելի շուտ...

ԲԱՂԻՐՈՎ.— Քեզ վերևից ավելի լավ է երևում...



ԲԵՐԻԱ.— Ծերուկը չի խանգարում, բայց, այնուամենայնիվ, նուրբ պիտի արվի... Իր ոճով։

ԲԱՂԻՐՈՎ (կարծես Բերիային շլսելով).— Չէ... ես կարծում եմ, որ ծերուկը չի խանգարի...

ԲԵՐԻԱ.— Արդեն սկսել ենք... (Նուրբ նայելով)։ Հիմա մնում է, որ իրենք՝ հայերը, շտապեն։ Երկու տարի ժամանակ եմ տվել։ Աշխարհի բոլոր ծայրերից թող գան հայրենիք... Մնացածը մեր գործն է։

ԲԱՂԻՐՈՎ.— Բոլորը չեն գա... Ամերիկայում ու Անգլիայում մեծահարուստներ կան...

ԲԵՐԻԱ.— Նրանք թող մնան։ Հաշիվ չի։ Գլխավորը ժողովուրդն է, պատրիոտները... Լեզու իմացողները, Հայաստանի գաղափարը կրողները... Ես նրանց լավ գիտեմ... Նրանք կգան... Եվ խուփը կփակվի։ Միանգամից տեղահան կանենք բոլորին՝ Թիֆլիսից, Երևանից, Բաքվից...

ԲԱՂԻՐՈՎ.— Ղարաբաղից... Նախիջևանից...

ԲԵՐԻԱ.— Նախիջևանում հայ կա՞ որ...

ԲԱՂԻՐՈՎ (ժպտալով).— Չկա։ Հիմա (ցույց տալով իր գլուխը) էստեղից դուրս չի գալիս...

ԲԵՐԻԱ.— Միայն մեկ տարի։ Եթե կարողանանք երկաթգիծը տրամադրել նրանց։ Օր ու գիշեր արտաքսում... Կովկասից, Մոսկվայից... ամբողջ ԽՍՀՄ-ից։

ԲԱՂԻՐՈՎ.— Բոլորին...

ԲԵՐԻԱ.— Փառք Աստծո (նայելով Ստալինի դիմանկարին), ծերուկը հող նախապատրաստել է... Նացիոնալի՛ստ, տրոցկի՛ստ, դասակարգային թշնամի՛, բալտո՛ւն... Բոլորի՛ն...

ԲԱՂԻՐՈՎ.— Անմնացորդ։

ԲԵՐԻԱ.— Չէ, ինչու... (Նենգամպիտ)։ Թող մի քիչ մնան։ Պետք կգան։ Վրաստանում ես նրանց օգտագործելու ձեր դտել եմ։ Ինչ-որ մենք չենք կարող անել՝ իրենք կանեն։ Ատելությունը շատ է նրանց մեջ։ Միմյանց մեզանից ավելի ուժեղ կարող են ատել... Իսկ դա ի՞նչ է նշանակում՝ գիտե՞ս...

ԲԱՂԻՐՈՎ.— Գիտեմ։ Օրգանական պրոպագանդա։ Միմյանց կսովորեցնեն ատել իրար։ Ոչնչացնելուց ուժեղ է... Թուրքիան չկարողացավ, մենք կանենք...

ԲԵՐԻԱ.— Ռուսախոս, վրացախոս, թրքախոս, օտարամոլ... Հոգին աքսորելու համար նրանցից մի քիչ պետք են ինձ։ Գեներատոր...

ԲԱՂԻՐՈՎ (երևակայելով).— Հայաստանի մի մասը՝ Լոռու ավտոնոմ հանրապետություն, մյուս մասը՝ Զանգեզուրի ավտոնոմ հանրապետություն՝ Ադրբեջանի կազմի մեջ, Երևանով...

ԲԵՐԻԱ (խեթ հայացքով։ Բութ մատով կազմված ձեռնանշան է ցույց տալիս).— Առ հա... Երևանը դեռ Թամարի ժամանակ գծված էր Վրաստանի քարտեզի վրա... Ադրբեջան վաաբշե չկար...

ԲԱՂԻՐՈՎ.— Լավ, էդ մեկը քեզ... Վասսալամ... բան չունեմ...

Լույսը Բերիայի և Բաղիրովի վրայից տեղափոխվում է պուրակի վրա։ Ձախ կողմի նստարանին Ուսանողն ու Հրանուշն են, նրանց դիմացի նստարանին «Թուրք» մականվամբ զողն ու Մարուսն են տեղավորված։ Մարուսը Թուրքին ինչ-որ բան է պատմում՝ ճանճախակի շուրթերը մոտեցնելով նրա ականջին. ամեն ինչից երևում է, որ նա պատմում է, թե ինչպես է խաբել «ճարիֆի»։ Իսկ Ուսանողը իր բռի մեջ է վերցրել Հրանուշի ձեռքը, և Հրանուշը՝ գունատ, ճիճար այդ աղջնակը, հայացքը նրա ձեռքից չի բարձրացնում։

ՀՐԱՆՈՒՇ.— Երեկ մի թոքը չորացրին։

ՈՒՍԱՆՈՂ.— Ես հաց եմ բերել ձեզ համար...

ՀՐԱՆՈՒՇ (շտապ).— Չէ... Պետք չի... Նա դեռ հիվանդանոցում է...

ՈՒՍԱՆՈՂ.— Բա ո՞վ...

ՀՐԱՆՈՒՇ.— Ի՞նչ՝ ես...

ՈՒՍԱՆՈՂ.— Գիտեմ, որ դժվար է... (Ձեռքը տանում է իր գրպանը)։ Մի քիչ էլ փող ունեմ...

ՀՐԱՆՈՒՇ (չանդրահարվածի պես ճիչ է մնում վեր թռչի իր տեղից, շուրջն է նայում).— Չէ... Ինչ ես ասում... Ինձ փող պետք չի... Ես ամեն ինչ ունեմ...

ՈՒՍԱՆՈՂ.— Լավ... Նստիր... (Երկար նայում է նրան)։ Ես չեմ ուզում, որ դու տխուր լինես...

ՀՐԱՆՈՒՇ (չինծու աշխուժանալով).— Ես տխուր չեմ։

ՈՒՍԱՆՈՂ.— Ես չեմ ուզում, որ դու գունատ լինես...

ՀՐԱՆՈՒՇ (չինծու սեթևեթանքով).— Մեր ընտանիքում բոլորն էլ գունատ էին... Ցեղական է... (Հիշելով նոր հիվանդությունը և կապելով իր խոսքերը դրա հետ՝ նվաղում է)։

ՈՒՍԱՆՈՂ.— Ես ինձ վատ եմ զգում, երբ դու խեղճանում ես։

ՀՐԱՆՈՒՇ.— Խեղճանո՞ւմ եմ որ...

ՈՒՍԱՆՈՂ.— Մի խեղճանա... աշխարհը չարժի, որ խեղճանաս։

ՀՐԱՆՈՒՇ.— Խեղճերին չեն սիրում։ (Լռում է։ Մտածմունքի մեջ է ընկնում։ Ուրիշ տրամադրությամբ, իսկապես տխուր)։ Ես, երևի թե, դեռ մարդ չեմ... Ուղղակի մարդ դառնալու նյութ եմ... (Ժպտալու փորձ է անում)։ Ուրախանում եմ, երբ ինձ մոտ էլ ինչ-որ բան ստացվում է ուրիշների նման։ Շարժվել ուրիշների նման, հասկանալ ու պատասխանել նրանց պես... Կատարել մարդկային ամենաառօրական անելիքները... Լինել բոլորի նման։ Ու երբ հիշում եմ, որ ես էլ ուրիշների նման եմ ծնվել՝ գոհունակություն եմ զգում... Որ ես մարմնական եմ ուրիշների նման... Եվ վերջապես ես պիտի մեռնեմ՝ ուրիշների նման։ Մահվան փաստը իմ էության ամենամեծ հաստատումն է։

ՈՒՍԱՆՈՂ (ընդհատելով նրա խոսքը).— Այդպես մի խոսիր...

Ուսանողը համբուրում է Հրանուշի ձեռքը։ Այդ բանից Հրանուշը ավելի է լցվում, աչքերը խոնավանում են։ Մարուսը՝ նկատելով այդ բոլորը, հրում է Թուրքին, որ նա էլ տեսնի։ Թուրքը ևս զարմանքով ու ճենգաժպիտով դիտում է, ապա նրա զարմանքը փոխվում է արհամարհանքի, զզվանքի։

ՀՐԱՆՈՒՇ.— Ես հաճախ եմ հիշում, որ կարող եմ մեռնել... Դա ինձ օգնում է։ Մեռնելու կարողությունը ինձ ապրելու ուժ է տալիս... Հավասարեցնում է բոլորի հետ։

ՈՒՍԱՆՈՂ.— Ծնողներիդ չա՞տ են նեղացրել...

ՀՐԱՆՈՒՇ.— Ո՞վ ասաց... Ե՞ս եմ ասել...

ՈՒՍԱՆՈՂ (ստում է).— Հա ..

ՀՐԱՆՈՒՇ.— Մայրիկիս սպանեցին... Հայրիկիս ծեծեցին իմ աչքի առաջ։ Դրանից թոքերը փչացան։

Թուրքը սուլում է Ուսանողին։ Ուսանողը ուշացած նայում է նրա կողմը։

ԹՈՒՐՔ.— Արի իմ քածի ձեռքն էլ պաչի։

ՈՒՍԱՆՈՂ (շփոթված).— Ինչպե՞ս...

ՀՐԱՆՈՒՇ (Ուսանողին).— Գնանք, Մխակ...

ԹՈՒՐՔ.— Արի, ասում եմ, իմ քածի ձեռքն էլ պաչի... Ձե՞ս ուզում գալ... (Մարուսին): Գնա, Մարուս...

Մարուսը անհամարձակ ելնում է տեղից: Թուրքը հրում է նրան. առաջ մղում:

ԹՈՒՐՔ.— Գնա, գնա...

Մարուսը մոտենում է Ուսանողին և ձեռքը անհարմար մեկնում նրան:

ԹՈՒՐՔ.— Հը... Ես ում ասացի՝ պաչի։ (Մարուսը ձեռքը կոպտորեն դնում է Ուսանողի շուրթերին): Պաչի, էլի...

Մարուսը ավելի ուժեղ է սեղմում բուռը: Ուսանողը, խուսափելով, դեմքը թեքում է: Հրանուշը, ոտքի ելնելով, հեկեկում է: Թուրքը բարձրանում է նստարանից, մոտենում Ուսանողին, բռնում նրա գլուխը:

Պաչի՛, ասում եմ։

Մարուսը Թուրքի կողքին ավելի է լրբանում:

ԹՈՒՐՔ (Ուսանողին).— Երևանի պրապիսկա ունե՞ս... (Մարուսին): Արի՛, Սև Մարուս... (Հեռանալով Ուսանողից ու Հրանուշից): Մյուս անգամ որ հանդիպեմ քեզ էստեղ՝ կստուգեմ պասպորտդ... Որ պրապիսկայից դուրս եկած լինես՝ երեսդ կնախշեմ...

Դնում է. Մարուսը՝ հետևից:

ՈՒՍԱՆՈՂ (վիրավորված ու մոլոր. Հրանուշին).— Նստիր...

ՀՐԱՆՈՒՇ.— Գնանք։

ՈՒՍԱՆՈՂ (անջատված).— Մի քիչ նստիր... Հետո կգնանք...

Հրանուշը նստում է նրա կողքին, և հիմա Ուսանողն է գլուխը իջեցնում: Հրանուշը մեղմ. սփոփող հայացքով նայում է նրան: Դուլիս են Հունահայը, Լիբանանահայը, Իրանահայն ու Գնորդը: Գնորդը խոսակցությունների արանքում և անընդհատ տնտղում է հայրենադարձների հագուստները:

ՀՈՒՆԱՀԱՅ.— Տեսա՞ք ինչ ըրավ...

ԳՆՈՐԴ.— Գիտե՞ս ով է...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ով կուզե թող ըլլա։



ԳՆՈՐԴ (տարակուսանքով).— Թուրքն ա... գող ա։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Գո՞ղ է... Ծո՛, հապա ինչո՞ւ հարգանքով կըսես... Գողին ալ հարգե՞ն։

ԳՆՈՐԴ.— Մի քիչ ապրի՝ դու էլ կհարգես։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (մոտենալով Ուսանողին).— Քու ծանո՞թդ է։

Ուսանողն ու Հրանուշը, կարծես չլսելով նրան, հեռանում են։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Կերևի, որ ծանոթը չէ... Խեղճ տղեկ... Աղվոր մանչ կերևի...

ԳՆՈՐԴ.— Մեզ մոտ՝ «լավ տղա» գողին են ասում, սովորի՛ր։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ձեմ սորվիր... բնավ չեմ սորվիր։ Կուրծքին վրան ալ խաչ կկախեն կոր։ Ատոր ալ չեմ սորվիր։ Ես Աթենքին մեջ կրոնքի դասեր առեր եմ։ Եկեղեցի գացեր եմ...

Գնորդը ծիծաղում է։

Ինչո՞ւ կխնդաս, աղբար։ Խնդալիքը իմ ըրա՞ծս է, թե՞ ձեր ըրածը։

Բեմը լցվում է հայրենադարձներով։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (Հունահային, Իրանահային և Գնորդին).— Իմացա՞ք...

ԳՆՈՐԴ (տնտղելով Լիբանանահայի պիջակի աստառը).— Ի՞նչ պիտի իմանայինք...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (շուրջը նայելով).— Կըսեն... (Ավելի կամաց): Անոնք... արդեն Կիրովական հասած են։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ո՞վ ըսավ։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (բազմանշանակ).— Ըսի՛ն...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ձե՞ն բռներ...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ոչ։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Կբռնեն։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (շախորժելով).— Ինչպես կբռնեն, ճանըմ... երբ արդեն Կիրովական հասած են։

ԻՐԱՆԱՀԱՅ (հաստատ).— Թիֆլիսում կբռնեն։

ԳՆՈՐԴ (տնտղելով Իրանահայի պիջակի աստառը).— Հաստատ կբռնեն...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (բարկացած. Գնորդին).— Դուն եթե չհայտնես՝ ի՞նչ կերպ պիտի իմանան։

Գնորդը ճանկարծակիի է գալիս։ Հունահայն էլ է արդեն կասկածանքով նայում նրան։ Գնորդը շփոթվում է, չգիտի ինչ ասի։ Հայրենադարձների խմբից սրանց է մոտենում Սուրիահայը։

ՍՈՒՐԻԱՀԱՅ (առանց իմանալու, թե ինչի մասին էին սրանք խոսում, շշուկով).— Իմացե՞ր եք... Ֆրանսացի փախստականները Ալավերդի հասեր են...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ալավերդի չէ, Կիրովական...

ԳՆՈՐԴ (վիրավորված ինքնասիրությամբ).— Հրե՞ս, ամբողջ Երևանը գիտի, ե՞ս պիտի լուր տանեմ... չե՞ս ամաչում...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Կատակ ըրի, իշտե կատակ էր... (Բռնազբոսիկ ծիծաղում է և թմփացնում Գնորդի ուսին)։

ԳՆՈՐԴ.— Իզո՛ւր... Էգպիսի կատակներ չեն անում։ Ինձ հետ արեցիր, ուրիշի հետ չանես... Ես ձեզ լավությունից բացի ուրիշ բան չեմ անում... Ինձ ի՞նչ է պետք՝ սաղացնել ձեր փալաս-փուլասը... Թե չէ՝ ծախելուց որ բռնեն, տեղնուտեղը՝ կնստեցնեն։ (Հեռանում է)։

ՍՈՒՐԻԱՀԱՅ (նրա հետևից).— Է՜, բան մը չըսինք, աղբար։

Բուլղարահայը դեռ անհամարձակ պտտվում է սրանց շուրջը, հետո վճռական մոտենում։

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ (շշուկով).— Կըսեն՝ ֆրանսահայերու խումբը Լենինական է հասեր...

Սրանք խնդմնդալով իրար են նայում։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ուշացեր ես, բաբամ... Հիմա այլես Քոլագիրան հասած պիտի ըլլան...

Գալիս է Ֆրանսահայը։ Հունահայր մոտենում է նրան։

Դուն ավելի լավ կգիտնաս...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (չլսելով Հունահային, հոգսաշատ).— Բան մը ըսեմ՝ չես հավատար։

ՀՈՒՆԱՀԱՅ (ֆրանսահայերի փախուստի լուրի սպասումով).— Ի՞նչ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (լուրջ նշանակություն տալով).— Ես առանց կնիկի չեմ կրնար։

Մնացածին թվում է, որ Ֆրանսահայի խոսքը իրենց հետաքրքրող առարկայի մասին է. նույնպես մոտենում են։



ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ճշմարի՞տ է, որ հասեր են Լենինական։

ԻՐԱՆԱՀԱՅ (բերահավատությամբ). — Ձերոնց Լենինական հասնելը ճի՞շտ է։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Չե՞ն բռներ։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Կբռնե՜ն։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (պոռթկում է զայրույթով).— Ես կիներու մասին կխոսիմ, դուք խումբին մասին կըսեք... Աս ինչ անլուրջ ժողովուրդ եղած եք։

ԻՐԱՆԱՀԱՅ (իր կարծիքը հաստատելով).— Ուրեմն՝ ոչինչ չե՞ս իմացել...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Չեմ ալ ուզեր գիտնալ։

Բոլորը դժգոհ մի կողմ են քաշվում, բացի Իրանահայից։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ի՞նչ էիր ասում։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (տակավին չհանդարտվելով).— Բան մ՞ալ չեմ ըսեր...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Կնիկների մասին էիր խոսում...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (չուզելով).— Այո... Կըսեի՝ ես առանց կնիկի չեմ կրնար։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Պատահում է։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (վերադառնալով իր հուզական ոլորտը).— Է՜, մեղավո՞ր եմ... Դուն ըսե, մեղավո՞ր եմ... Հանցանք ունի՞մ...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Չէ, ի՞նչ հանցանք...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Հապա ի՞նչ ընեմ... Խորհուրդ մը կրնա՞ս տալ... (Սպասում է)։ Չես կրնար։ Գիտեմ չես կրնար։ Որևէ մեկ մարդ չի կրնար։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Դարդս էլ էդ լինի, ջանըմ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Է, ասիկա ամենեն մեծ դերդն է... Գիրք կկարդա՞ս...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Կարդում եմ, բա ինչ եմ անում։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ի՞նչ կկարդաս։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Էդ էլ պիտի ասե՞մ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ըսե, որ իրարու լավ հասկնանք։

ԻՐԱՆԱՀԱՅ (անտրամադիր).— Րաֆֆի, օրինակ... (Մտածում է)։ Մուրացան... Հովհաննես Թումանյան։ Հետո՝ Շիրազ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Զիգմունդ Ֆրեյդ կարդացե՞ր ես...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ցրի՞չ... Հայերե՞ն է գրում... Թե հայերեն է գրում՝ մի բան անպատճառ կարդացած կլինեմ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ոչ, գերմաներեն։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Թարգմանությունը կա՞...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Կարդացած բլայիր նե՝ չէիր ըսեր «դարդս էդ լինի»։ Աշխարհիս ամենեն մեծ գիրքը ատ է։ Ասորմե սկիզբ կառնե ամենը։ Երեանին մեջ դանակահարությունը շատ է։ Ատոր սուզ բլայեն է։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Չէ՞ մի...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Այո՛, այո՛, իրավ կըսեմ։

Որոշ ժամանակ լռում են, ռուդինետ նրանց ննջում սյուրակի կյանքը աշխուժանում է, և ուշադրությամբ է գրավում։ Մեկը ագրահն է դնել և ցույց է տալիս ընկերոջը. Երկրորդը ռուսերեն լրագիր է վանկ-վանկ կարդում և թարգմանում մյուս երկուսին։ Այս մեկը կոլտնտեսությունն է և իր մկաններն է ցուցադրում մի ճանիսին։ «Է, դրամ կարելի՞ է վաստակել ատ մկաններով», հարցնում են նրան։ «Կուզեմ», պատասխանում է կոլտնտեսությանը։ Ծիծաղում են։ Այս բոլորը միայն ֆոն է առաջին պլանի համար։

ԻՐԱՆԱՀԱՅ (սթափվելով. Ֆրանսահայից).— Գտիր քեզ համար մեկին, ու հարցր կլուծվի, թե չէ՞ դանակահարությո՞ւն, պատերա՞զմ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ի՞նչ ըսիր...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ասում եմ՝ գտիր մի կնիկ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Քեզի դյուրին կթվի... Երեանը Փարիզ չէ։ Երեկ առտու սա քովի շենքին մոտ՝ օպերային առջևնե օրիորդ մը կանցներ, ես անոր հիացմունքս հայտնեցի՝ ըսելով՝ «Որքան աղվոր աչքեր ունիս»։ Օրիորդը ինծի դարձավ ու պատասխանեց՝ «Ցոփ երեսիդ»։

ԻՐԱՆԱՀԱՅ (չհասկանալով կամ չհավատալով իր լսածին).— Ի՞նչ...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (չեչտակի նայելով նրան).— Իշտե, ըսածիս պես։

ԻՐԱՆԱՀԱՅ (իր մեջ վերհիշելով լսածը).— Չէ մի...

Եվ Իրանահայը ծիծաղում է երկար ու ճռճռ։ Ֆրանսահայն էլ է նրանից վարակվում ծիծաղով։ Մոտենում է Ամերիկահայը։ Փոխրինչ ենտո րեմի եզրին անհետ հայանվում է Դաղտնի գործակալը. ապա խառնվում է հայրենադարձների ամբոխին ու նրանց միջից երբեմն-երբեմն աչք ածում Ամերիկահայի կողմը։



ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (խոժոռ).— Ինչո՞ւ կխնդաք... Աս երկրին մեջ խնդալ թող կուտա՞ն... Չե՞ք գիտեր, որ սա պարտեզն ալ կկոչվի «Լացի այգի»։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (տակավին ծիծաղելով).— Համաշխարհային քաղաքականության մասին կպատմեմ...

ԻՐԱՆԱՀԱՅ (ուզում է վերապատմել՝ ծիծաղը խանգարում է).— Չէ... չեմ կարող... (Իր դեմքն է ցույց տալիս և ուրիշ բան չի կարողանում ասել):

Ֆրանսահայը նույնպես իր դեմքն է ցույց տալիս։ Ամերիկահայը օչինչ չի հասկանում, բայց նրանց ծիծաղը իր խոժոռ դեմքին եւ լոլոլ մի ժպիտ է բերում։ Դալիս է Անդոն։ Ամբողջ «Լացի այգին», տեսնելով նրան, պապանձվում է։ Անդոն նայում է շղթերաչի վրայի Սոսայինի նկարին, ապա՝ աշնամարանենով մնացածին։

ԱՆԴՈ.— Ցրվե՛ք... Չեք իմանո՞ւմ՝ խմբավորվելը արգելված է... Ցրվեք, քանի չեմ տարել...

Հայրենադարձները մեկ-մեկ ճանաչում են գլուխ ընկեարպակի եզրերը և անհետանում։ Միայն Դաղտնի գործակալը գնում է մինչև ըեմի խորքը և այնտեղից դիտում... Համառորեն իր տեղում մնացած Ամերիկահային։

ԱՆԴՈ (Ամերիկահային).— Քեզ չի վերաբերո՞ւմ, ա՛յ ընկեր... որ խմբավորվելը արգելված է։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (կծու).— Է, ես ինծի հետ ա՞լ խմբավորվելու իրավունք չունիմ...

ԱՆԴՈ (առանց խոռանալու).— Չի կարելի... Նե պալաղայնտայա... (Խիստ պաշտոնական): Գնա՛... ա՛յ ընկեր... ա՛յ ախպար։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ո՞ւր երթամ...

ԱՆԴՈ.— Տուն։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ես տուն չունիմ։ (Կծու): Ես հայրենիք ունիմ։

ԱՆԴՈ (տնավարի).— Գիտե՞ս ինչ կասեմ, ախպար... Թո՛ղ եղիր, քանի ուրիշ բան չի պատահել...

Իր քաշտաշից դուրս է գալիս Ֆրանսահայը։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (Անդոյին).— Բարև, ընկեր Անդո... (Ամերիկահային կարծես նոր է տեսնում): Քեզի կփնտրեի... Երթանք, հոն քեզի կսպասեն... (Անդոյին): Ի տեսություն... ընկեր Անդո... մենք կերթանք...

ԱՆԴՈ.— Լավ կանեք... (Շուրջն է նայում և դուրս գնում):

ՖՐԱՆՍԱՀԱՅ (փորձելով Ամերիկահային հարց տալ մի կողմ).— Գիտե՞ս ով է...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (խնդալով).— Ո՞վ է։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Լեյտենանտ Անդոն է։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ի՞նչ կըսես...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Երևանի մեջ ուրիշ Անդո չկա... Ի՛նքն է։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (զարմանք խաղալով).— Ի՞նչ կըսես... օն, ես կանչե... Անդոն է եղեր...

ՖՐԱՆՍԱՀԱՅ (շրմրռնելով նրա տնազը).— Ինչո՞ւ...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Գեներալ դը Գոլեն նամակ ունիմ անոր...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Հոս մտիկ ըրե... Կատակ կընես... Եվ չես գիտեր, որ գեներալ դը Գոլը... նույնիսկ քու պրեզիդենտալ Անդոյին իրավունքին կեսը չունի... (Մի առանձին և անսպասելի ձևով): Հերիֆներ են Անդոյին քով...

Ամերիկահայը զարմացած նայում է Ֆրանսահային:

Մի վախնար... տակավին չեմ խենթացած... (Համոզելով, հաշտ): Քիչ մը ապրիս նե հոս... ան ատեն կհասկնաս. հիմա երթանք...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (նույնպես մեղմ).— Ո՞ւր...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Կայարան... Ես հոն սլաքավարի խուց մըն եմ վարձեր... «Բուզկա» կըսեն հոս... Քիչ մը հանգչինք...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (հաշտված).— Վարձո՞վ է։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Օրավարձը՝ հատ մը փողկապ... Ես փողկապ շատ ունիմ... Գացինք...

Նրանք դուրս են գնում: Խարխից առաջանում է Գաղանի գործակալը և հետևում նրանց:

## 3

Նոցեհարցի վրա. Ստալինի նկարի առջև՝ Բերիան և Բաղիրովը: Ներհևում՝ քնմահարգակին կանգնած է Արությունովը՝ նայացքը վեր՝ նրանց կողմը:

ԲԵՐԻԱ.— Հը... Արությինով... Ո՞ւր է քո կուսակցական պարտքի գիտակցությունը։



ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Ես...

ԲԵՐԻԱ.— Դու՛ Մի՞թե հայ ժողովուրդը հայրենասեր չէ... հը՞... Թե՞ քո մարդիկ չեն կարողանում պրոպագանդել հայրենիքը... Ասում էին՝ սահմանը բացեք թե չէ՝ համայն հայ ժողովուրդը կլցվի Հայաստան...

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ (անհամարձակ).— Պլանները կատարվում են... Երկու ամսվա ընթացքում երեսուն հազար մարդ ներգաղթեց...

ԲԵՐԻԱ.— Որից տասը հազարին բռնել են Բաթումի մոտ սահմանն անցնելիս... Բա որ թափանցեն էն կո՞ղմ...

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Չեն թափանցի։

ԲԵՐԻԱ (արհամարհանքով).— Էդ դո՞ւ ես անելու, որ չթափանցեն։

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Ոչ։ Մեր պանծալի ներքին գործերը...

ԲԱՂԻՐՈՎ.— Էսպես որ ներգաղթեն՝ մենք մի տասը տարի էլ պիտի սպասենք... Թե՞ կապիտալիստական հացը հայրենականից համով է...

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Նավերը հերիք չեն անում։

ԲԱՂԻՐՈՎ.— Եթե նավերին մնա, ես ամբողջ Կասպից նավատորմը հայ ժողովրդին փեշքեշ կանեմ... Թող գան իրենց հայրենի երկիրը...

ԲԵՐԻԱ.— Գործի՛ր, Արությինով... ժա՛մ արի... Թե՞ դու էլ ուզում ես նորից Թելավի վերադառնալ... հը՞... (Ծիծաղում է): Կտանեմ, կտանեմ... մի քիչ համբերիր... Քեզ նման կուսակցականներ ինձ պետք են...

ԲԱՂԻՐՈՎ.— Ագենտներից հասկացրու, որ առաջին հերթին հայ կուսակցականներին բերեն...

ԲԵՐԻԱ.— Համոզված կոմունիստներին... Դու հո հասկանո՞ւմ ես՝ Իսկականներին։ Մեզ համար ամենավտանգավորները նրանք են։

ԲԱՂԻՐՈՎ (ժմծիծաղով).— Սկզբունքային կուսակցականները...

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Դնեպյանի հետ արդեն լեզու գտել ենք... Շատ զգույշ է...

ԲԵՐԻԱ.— Զգո՞ւյշ։ Չի՞ հավատում։ Բա քո գործը ի՞նչն է, քո

շնորհքը ո՞րն է, թե մասնագիտության սպեցիֆիկան որն է…

Լույսը նրանցից տեղափոխվում է բեմահարթակի վրա, ուր շատ աղմկոտ է. և հին հայրենադարձների հետ կան նաև նորերը՝ դեռևս ճամպրուկները ձեռքներին: Նրանք են տարբերվում նրանց հներից. դեմքերին թարմություն, ոգևորություն կա և մի քիչ էլ՝ շփոթվածություն:

ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Վերջապես հայրենիքիս մեջն եմ…
ԻՐԱՆԱՀԱՅ.— Բարի եք եկել:
ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (երջանիկ).— Ամենքը հայերեն կխոսին… Չեմ կրնար հավատալ…
ՖՐԱՆՍԱՀԱՅ (նայելով ճամպրուկներին).— Փողկապներ չա՞տ բերեր ես…
ԵՐԿ. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ: Ձեռագիրներս են ասոնց մեջ: Քերթվածներս…
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Առանց փողկապի դժվար կըլլա…
ԵՐԿ. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հոգ չէ, աղբար… մենք ալ կաշխատինք առաջադիմել…
ՀՈՒՆԱՀԱՅ.— Խորհուրդ մը տամ՝ «աղբար» մի ըսեր:
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ…
ՀՈՒՆԱՀԱՅ.— Հոս ընդունված չէ:
ՍՈՒՐԻԱՀԱՅ (օղու սրվակը ծոցագրպանից հանելով).— Հոս «ախպար» ուրիշ առարկայի կըսեն… (Սրվակը դնում է շուրթերին):
ԵՐԿ. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ուրիշ որո՞ւն…
ՀՈՒՆԱՀԱՅ.— Ատիկա բացատրել չըլլար: Ատոր համար սովետական կրթություն պետք է:
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հուսամ՝ մենք ալ կստանանք ատ կրթությունը…
ՍՈՒՐԻԱՀԱՅ (կարգին գինովցած).— Կստանաք… կստանաք…
ԴՆՈՐԴ (մեկուսի).— Էն ժամանակ կտեսնեմ ձեր սիրուն աֆաթները… (Ա. նոր հայրենադարձին): Կոշիկ-մոշիկ, կոստյում-մոստյում բերի՞լ եք…
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Ֆրանսահային).— Սա մարդը ի՞նչ կըսե՝ չեմ հասկնար…



ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Բան մը չըսեր… ճանըմ… (հանդիմանանքով նայելով Դնորդին):
ԵՐԿ. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ուրիշ ինչպե՞ս եք հայրենիքին մեջ… Աղե՞կ եք…
ՖՐԱՆՍԱՀԱՅ (զուսպ).— Աղեկ ենք… շատ աղեկ ենք…
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Տուներուն բանալին ո՞ւր կուտան:

Ֆրանսահայը, Հունահայը և Իրանահայը իրար են նայում. չգիտեն ինչ ասել: Մոտենում է Ամերիկահայը:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ամեն ինչ հոս կուտան: Բանալին ալ, հայրենիքն ալ, երջանկությունն ալ…
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Պայուսակներս ալ ուրեմն հոս պիտի բերեն…

Իրանահայը զսպում է իր ծիծաղը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ (իր դառը փորձից ելնելով).— Կայարանին մե՞ջ ձեռքեդ առին՝ օգնած ըլլալու համար…
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Այո: Առինքնող հայ պարման մը, ասանկ շողարձակ աչքերով, մոտեցավ ու ըսավ՝ «Թույլ տվեք ձեզ օգնել»:
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (հեգնաբար).— Հոս կբերեն… Պայուսակներդ ալ հոս կբերեն՝ «Լայի աչքին»:
ՖՐԱՆՍԱՀԱՅ (ձգելով Ամերիկահայի թևը).— Ի՞նչ կըսես…
ԻՐԱՆԱՀԱՅ.— Գլխից ձեռք է քաշել էս մարդը…

Առաջին նոր հայրենադարձի փոքրիկ մանչուկը խանդավառված ներս է ընկնում:

ՄԱՆՉՈՒԿ.— Հայրի՛կ, հայրի՛կ… Ամենուր հայերեն գիրեր են…
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատոր համար հայրենիք կըսեն, մանչս…
ՄԱՆՉՈՒԿ.— Մենք աս հրապարակին շենքերո՞ւ մեջ պիտի ապրինք, հայրիկ:
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ, մանչս… հոն Հայաստանի կառավարությունը կապրի…
ՄԱՆՉՈՒԿ.— Հապա մենք ո՞ւր պիտի կենանք:

ՖՐԱՆՍԱՀԱՅ (քմծիծաղով).— Բուդկայի՞ն մեջ.
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Բուդկան ի՞նչ է...
ՄԱՆՉՈՒԿ.— Բուդկան գյու՞ղի կենդանակն...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Հարկավ... գյուղի կենդանակն... ավանդական հայկական գյուղի... (Վերամբարձ): Բուդկա՜... Բուդ-կա... Բուդ-կա...
ԵՐԿ. ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (հմայված).— Լավ կինչե կոր՝ բուդկա՜... մարմարե սյուներ կենթադրե կոր, քանդակներ միտքդ կուգան...
ՀՈՒՆԱՀԱՅ.— Ինչ պետք ունիս քանդակներու... Ըսե՛ փափուկ անկողին ըլլա, արտաքնոցն ալ մոտիկ: (Նկատում է ներս մտնող Սև վերարկուով միլիցիոներին): Եվ ոստիկանի աչքեն ալ հեռու...
ԱՌԱՋԻՆ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ոգևորված, արցունքներ աչքերին).— Աղե՜կ է հայրենիքը... Հայ կառավարությո՜ւն, Մասի՜ս, Մաշտոցի լեզո՜ւ, բուդկանե՜ր... Երջանի՜կ եմ երկիր... (Երգում է):

Մեր հայրենիք, թշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Յուր որդիքը արդ կանչում են...

(և այլն):

Սև վերարկուով միլիցիոներ վերարկուն հանում է և համազգեստով կանգնում նրանց դիմաց:

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (բարձր).— Ստոո՜պ... Վերջացրե՛ք...

Բոլորը պապանձվում են:

4

Գիշեր է: Շոգենավի վրա բազմաթիվ հայրենադարձներ են՝ ճամպրուկները գլխների տակ, այլազան, արտասովոր դիրքերով: Նստարանների վրա նստած են մի քանի նոր հայրենադարձներ, Հունահայը, Սուրիահայը: Գալիս է Անդոն, նայում, թե ովքեր են պառկած, ու հրում է նոր հայրենադարձներից մեկի ուսը:

ԱՆԴՈ.— Վե՛ր կաց... Ոնց էլ խռմփացնում է... Վե՛ր կաց, ասում եմ...



ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՑ ՄԵԿԸ (աչքերը մի կերպ բացելով՝ նստում է տեղում).— Ի՞նչ է... Բա՞ն մը եղած է...
ԱՆԴՈ.— Էստեղ քնելը արգելված է.
ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— Ինչո՞ւ...
ԱՆԴՈ.— Արգելված է և վերջ: Չե՞ս տեսնում՝ գրված է... (Ցույց տալով): Չքնել, սպատ զապրեշչենո:
ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— Ես ռուսերեն չեմ կարդար:
ԱՆԴՈ (նրա օձիքից բռնելով՝ քաշում է).— Էս լեզուն հո հասկանում ես:
ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— Ի՞նչ կընես, աղբար... Ես քնանալու տեղ չունիմ... Ի՞նչ կընես... Ձգե, աղբար...
ԱՆԴՈ (քաշելով).— Քեզ ո՞վ խնդրեց, որ գաս...

Աղմուկի վրա արթնանում են Սուրիահայն ու Հունահայը: Հունահայը մոտենում է Անդոյին, շշուկով ինչ-որ բան ասում և ձեռքը դրամ կոխում:

ԱՆԴՈ.— Էս նրա համար, բա քո փա՞յը:
ՀՈՒՆԱՀԱՅ (կրկին դրամ դնելով իր գրպանում).— Ես ալ իմ բաժինս. Կըլլա՞... Հիմա կրնա՞նք քնանալ...
ԱՆԴՈ.— Լուսաբացին այստեղ ոչ ոք չլինի:
ՀՈՒՆԱՀԱՅ.— Հրամանդ ընդունված է, ընկեր Անդո:

Անդոն մոտենում է Սուրիահային.

ԱՆԴՈ.— Էլի խմա՞ծ ես... Երազի մեջ էլ ես խմում, անաչքեն...
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Երազիս մեջ մաստիկա կխմեի... (Դրամ է տալիս Անդոյին): Կարթինամ՝ փողկա:
ԱՆԴՈ (դժգոհ).— Էս ի՞նչ ես տալիս:
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Հինգ ռուբլի. Կոլխոզնիկի տանին կոյկան տասը ռուբլի արժե:
ԱՆԴՈ (դրամը հետ նետելով).— Կգնաս կոլխոզնիկի տուն:
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Կեցի՛ր... Ընկեր Անդո... (Քաղցր): Անդո ջան: (Ավելացնում է): Հրամմեցե՛ք... Ես ալ վերջին ռուբլին...

Անդոն շարունակում է իր երթը: Նստարաններին նստածներից յուրաքանչյուրը նրան դրամ է տալիս ու նորից պառկում: Անդոն հեռանում է:

ՀՈՒՆԱՀԱՅ (Նոր հայրենադարձներից մեկին).— Մի՛ մտածեր... Մի՛ վշտանար... Սորվե՛... Վարժվիս պիտի. Անկե ետքը շատ բաներու կվարժվիս... Իմաստուն կըլլաս... կյանքի կաճառը կանցնիս... Չէ՞ նէ՝ մենք ամենքս աչքերնիս գոցած եկուոր ենք... Կեամարդ... Սովետական մարդն է մարդ... Քնացի՛ր, ճանըմ... քնացի՛ր... (Շոյում է նրա գլուխը. վերարկուն հարմարեցնում վրան: Ինքն էլ հարմարվում է նստարանի մյուս ծայրին՝ ոտուգլուխ):

ՍՈՒՐԻԱՀԱՅ (անհանգիստ պտտվում է տեղում).— Քունս ալ փախցուց...

Ծառերի միջից դուրս է պրծնում Բուլղարահայը, դես ու դեն ընկնում՝ չիմանալով որ կողմը փախչել... Նրա դիմաց դուրս է գալիս Առաջին խուժանը, նրա ետևից՝ Երկրորդ խուժանը: Որոշ ժամանակ իրար են նայում: Առաջին խուժանը կամաց-կամաց մոտենում է նրան:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Ես քեզ հո ասի, որ էդ գարշակը չցնես գլխից...

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Քեզի ի՞նչ վնաս կուտա կոր...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Կուտա, ախպար, կուտա...

Բուլղարահայը նայում է չորսբոլորը: Առաջին խուժանը հարվածում է նրան: Բուլղարահայը ուզում է մի կողմ փախչել. Առաջին խուժանը ոտք է դնում, և Բուլղարահայը ընկնում է: Առաջին խուժանը ոտքերով հարվածում է ընկած Բուլղարահային:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ.— Օգնե՛ք... աղբարներ... Օգնե՛ք... Հոս հայ չկա՞... Օգնե՛ք.. հայե՛ր... Հոս հայ չկա՞...

Սուրիահայը գլուխը բարձրացնում է և, տեսնելով բոլորը, նորից հնած ձևանում: Բուլղարահայը մի կերպ վեր է կենում, բայց երկու կողմից նրա ճամփան փակել են խուժանները: Բուլղարահայը վազում է մեկի կողքից և գալիս է Երկրորդ խուժանի դանակի վրա: Խուժանները մի պահ քարացած նայում են ընկած Բուլղարահային:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (վախեցած).— Սպանեցիր...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Չէի ուզում... Ինքը կպավ...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Աթանդա՛... Փախա՞նք...

Դուրս է վազում: Սուրիահայը նայում է չորսբոլորը, ապա զգույշ մոտենում է Բուլղարահային:



ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Սպաններ են, ծօ՛... Ինչու համար... Կրակը՝ գլխարկի... Հապա ինչո՞ւ չփախցուցին... Չեմ հասկնար իմաստը... Ինչո՞ւ հայերը կսպաննեն հայերու... Լալիս է. խեղճ ադեկ... Ես ամեն ինչ տեսա և ձայն չհանեցի. Առաջ տարան փախկոտ չէի... Հոս դարձուցին փախկոտ (Հարվածում է իր կրծքին): Անպիտան եմ... Անպիտան... Անպիտան... (Մոտենում է նաև Հունահայը): Սպաննեցին...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ես ալ տեսա...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Տեսա՞ր... և ձայն չհանեցի՞ր...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Չհանեցի, աղբար... Հոս ոչ մեկը ձայն չի հաներ...

Սուրիահայը դառնում է այգում գտնվողներին, որոնք նույնպես արդեն արթնացել են և սոսկած դիտում են:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Դուք ալ ձայն չհանեցիք... (Գոռում է): Ոչ մեկը ձայն չի հաներ... (Նայում է երկնքին): Դո՛ւն ալ ձայն չես հաներ... (Ավելի բարձր): Դո՛ւն ալ ձայն չհանեցիր...

Ներս է վազում ՍԵ վերարկուով միլիցիոներ

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Ի՞նչ աղմուկ է... (Տեսնելով ընկած Բուլղարահային): էս ինչ է... Բուլղարահայն է... Սպանե՞լ են... Ո՞վ է արել... Տեսնող չկա՞... (Հունահային): Դու տեսա՞ր... (Վերարկուն համազգեստի վրայից հանելով):

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ոչ: Ես քնացած էի...

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Ոչ ոք չի՞ տեսել: էդպես էլ գիտեի, որ ոչ ոք չի տեսել: էստեղ, քաղաքի կենտրոնում, աֆիցիալնի տերիտորիայում... էս սաղ ձեր օյիններն են... Ախպարների արածը...

Դալիս է Անդոն:

ԱՆԴՈ.— Ի՞նչ է պատահել

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Սպանել են, ընկեր լեյտենանտ:

ԱՆԴՈ.— Ո՞վ է...

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Հեչ... ախպար է...

ԱՆԴՈ (տնտղելով Բուլղարանայինն).— Էս պարավողի վրա բարձրացողն ա... Ո՞վ է սպանողը: (Լռություն): Տեսնող կա՞...

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Չկա: Բա կասե՞ն...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ես տեսա:

ԱՆԴՈ (զարմացած).— Դո՞ւ... Դու բնած չէի՞ր...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ոչ: Ես տեսա:

ԱՆԴՈ.— Դու խմած էիր ու բնած. ո՞նց տեսար:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Տեսա, ինչան:

ԱՆԴՈ.— Լավ: Որ տեսար՝ տեսար: Վկայություն կտաս: (Սուլում է):

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Ըստեղ եմ, ընկեր լեյտենանտ:

## 5

Վաղ առավոտ: Այգում միայն Սուրիահայն է: Նրան է մոտենում Գնորը:

ԳՆՈՐԴ.— Ո՞ւր ես կորել... Էլ շուկայում չես երևում... Ասատուրը ասաց՝ էստեղ ես լինում... Ճիշտ դուրս եկավ...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ասատուրն ո՞վ է:

ԳՆՈՐԴ.— Քո ընկերը:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ես չունիմ առանձ ընկեր:

ԳՆՈՐԴ.— Ա՛յ քեզ բան... Ինքը քեզ լավ գիտե:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ըսի՝ չունիմ առանձ ընկեր:

ԳՆՈՐԴ.— Շուկայում փախլավա է ծախում: Դու էլ կողքին էիր կանգնած՝ կոստյումը ձեռքիդ... Չե՞ս հիշում... Քեզնից կոստյումը առա, նրանից էլ՝ փախլավա: (Ծիծաղում է):

ՍՈՒՐԻԱՀԱՅ (դառը).— Փախլավան կերար, կոստյումն ալ հագար...

ԳՆՈՐԴ.— Հա... ախպեր:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Հիմա ի՞նչ կուզես...

ԳՆՈՐԴ.— Ինչ պիտի ուզեմ... շնորհակալություն... (Ծպտալով): Մեկ էլ՝ կոստյում: Քո կոստյումները ճաշակով են:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Հոս նայե... ըսե ինծի՝ դուն քանի՞ կոստյում կհագնիս:



ԳՆՈՐԴ (ծիծաղելով).— Ինչքան որ ունեմ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ինծմե առածին... (մտքի մեջ հաշվելով) յոթ հատ կոստյում գնած ես...

ԳՆՈՐԴ.— Լավ ես հիշում:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ինչպե՞ս չհիշեմ... Ութն ալ իմ վրայիս կոստյումներն են... Հիմա աս մնացեր է... Մեկ հատ:

ԳՆՈՐԴ (տնտղելով կոստյումը).— Սախի՛ր...

ՍՈՒՐԻԱՀԱՅ (զարմացած).— Ու՛, խենթացե՞ր ես... Կրսեմ՝ աս մեկն է վրաս... Կուզես մե՞րկ մնամ:

ԳՆՈՐԴ (մտքի մեջ հաշիվ անելով).— Ոչինչ... դու էլի կճարես... ի՞նչ տամ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ (զոռալով).— Ուրկե՞ ճարեմ... Ի՞նչ դրամով... Չե՞ս տեսնար՝ չորերոփս կպրիմ:

ԳՆՈՐԴ (կպել է).— Ասա՝ ի՞նչ տամ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Կորի՛ր, ծո՛... Քեզի մնա՝ կաշիս ալ կառնես... (Ցույց տալով իր մաշկը): Չե՞ս ուզեր... ախպարական է... Չէ նէ՝ անպատճառ արտասահմանյան կուզես... Կորսվե՛, ըե՛...

ԳՆՈՐԴ (առանց ջղայնանալու, հանգիստ, համառությամբ).— Երկու հարյուր ռուբլի տա՞մ... (Գրպանից հանում է դրամների դաստան):

ՍՈՒՐԻԱՀԱՅ (մոռանալով իր ասածը, այժմ ջղայնանում է Գնորդի լրբության վրա).— Հացին կերան շուկայի մեջ ի՞նչ արժե, գիտե՞ս...

ԳՆՈՐԴ.— Գիտեմ... (Հաշվելով դրամները): Երեք հարյուր...

ՍՈՒՐԻԱՀԱՅ (փոքր-ինչ մեղմ).— Կորսվե, ծո՛...

ԳՆՈՐԴ.— Չորս հարյուրը լավ գին է... Վրան էլ սա կտամ: (Հանում է մի շիշ օղի): Վերցրո՛ւ:

ՍՈՒՐԻԱՀԱՅ (օղու տեսքից ավելի մեղմանալով).— Է՜... գիմացս աշուն է... Ինչպե՞ս ապրիմ...

ԳՆՈՐԴ.— Ցոլա կգնաս... (Փաղաքուշ): Վերցրո՛ւ:

Սուրիահայը ոտքից ոտք է ընկնում, ի վերջո ձեռքը թափ է տալիս ու հանում իր վրայի պիջակը:

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ինչ կըլլա՝ թող ըլլա... Աստված ողորմած է, կըսեն:

ԳՆՈՐԴ.— Ապրե՛ս: (Պիջակը հագնում է):

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Վանոցի ասկե ետ ինձմե կոստյում ալ չեն կրնար առնել՝ գաղտնիք մը բաց ինծի...
ԳՆՈՐԴ.— Աչքիս վրա:
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Կըսեն՝ սա մեր շորերը Թիֆլիսի շուկան կտանիր:
ԳՆՈՐԴ (ծիծաղելով).— Շատ բան իմանաս՝ շուտ կպառավես, լա՛վ կաց: (Գնում է):
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Առանց կոստյումի հոս քնանալ այլևս չեմ կրնար... Կերթամ Կոլխոզնիկի առնել: Դրամներս մեկ շաբաթ կբավեն... (Սկսում է մտածել): Ո՛չ, բնավ խելք չունիմ ես... Դուրս կուգա՝ կոստյումս տվի՝ առանց կոստյումի քնանալու համար... Կոստյումով հոս կքնանայի, առանց կոստյումի՝ հոն... Հայի խելք, իշու... Վնաս չունի, օղի խմել սորվեցուցին հոս, հոս ալ մերկ քնանալ կսորվեցունեն...

Գալիս է Անդոն:

ԱՆԴՈ.— Էս ինչի՞ ես էստեղ:
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Կերթամ, ընկեր Անդո... Հիմա կերթամ:

Սուրիահայը գնում է: Բեմի խորքից գալիս է Թիֆլիսահայը՝ ճնամաչ մի ճամպրուկ ձեռքին, գլխին փոքրիկ սև կեպի՝ հովարը աչքերին իջեցրած, նեղ «բռուտիկա» շալվարով և կաշվե կարճ բաճկոնով: Նա հետաքրքրասիրությամբ ձախ ու աջ է նայում, տեսնելով Անդոյին՝ զգուշավորվում: Նրա վարքը կասկածելի է թվում լեյտենանտին: Ու Անդոն էլ յուրովի հետևում է նրա շարժումներին:

ԱՆԴՈ.— Քաղաքացի՛...
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (նայելով Անդոյի կողմը).— Ես...
ԱՆԴՈ.— Հա... հենց դո՛ւ:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Ի՞նչ կա:
ԱՆԴՈ.— Մոտ արի:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Ի՞նչ հաշվով... (Պատասխան չստանալով): Լավ, թե պետք ա՝ ուզում ես կողքդ կկանգնեմ: (Մոտենում է Անդոյին):
ԱՆԴՈ.— Պասպորտդ մի տեսնեմ:

Թիֆլիսահայը հանում է անձնագիրը: Անդոն վերցնում է, թղթատում:



Թիֆլիսո՞ւմ ես ապրում:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Էդտեղ ուրիշ բա՞ն ա գրած:
ԱՆԴՈ.— Ես հարցնում եմ՝ պատասխանիր:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (գրպանից հանելով տոմսը).— Էս բիլեթն՝ Տփխիս—Երևան, պլացկարտ, վերևնի մեստա...
ԱՆԴՈ.— Ճամպրուկդ բաց արա:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (չի հասկանում).— Ի՞նչը բաց անեմ:
ԱՆԴՈ (մատնանշելով ճամպրուկը).— Ճամպրուկը:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Չամադան ասա, էլի՛... Գրաբար ես խոսո՞ւմ... Իմ չամադանը քու ցավը տանի... Բացեմ... Չամադան ա, էլի՛... Վրեն զամոկ էլ չկա, որ ալարս գա: Պաժալուստա՛... (Դողդողալով բացում է ճամպրուկը):
ԱՆԴՈ (ճամպրուկի միջից մի սերկևիլ է հանում, տնտղում ու նորից մեջը գցում).— Ծախելո՞ւ ես բերել...
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Վա՜յ մե... վա՜յ մե... Իրեք կիլո կոմշի Երևան եմ բերել ծախելո՞ւ համար... Բա ինձ լաչե՞ղ ա... Ուզո՞ւմ ես՝ թափեմ, լոթիանա...
ԱՆԴՈ (արհամարհանքով).— Լա՛վ, լա՛վ... գնա՛:
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (փակելով ճամպրուկը).— Ձեր էրեսն չեմ եկել՝ դու ասում ես՝ գնա... Պերվի ռազ պրիեզժայու նա ռոդինու, ու դավարիշ՝ գնա: Ասում էին, որ էրեվանցիները դուռի են՝ չէի հավատում... Դու Թիֆլիս եղե՞լ ես: Տեսե՞լ ես ինչ ադուհաց կա: Թե չես էկե՝ արի, ուզում ես չամադանով, ուզում ես առանց չամադանի...

Գալիս է Մարուսը, ուղղում գուլպաները, տեղավորվում նստարանին՝ բանի տեղ չդնելով Անդոյին և ուշադրությամբ դիտելով Թիֆլիսահային:

Գլխներիս վրա կպահենք, պատիվ կտանք... Ջան կասենք ու ջան կլսենք...

Անդոյին ձանձրացնում է Թիֆլիսահայի շաղակրատանքը և նա, ձեռքը թափ տալով, հեռանում է:

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (տեսնելով, որ Անդոն այլևս հեռու է՝ այլափոխվում է, արհամարհանքով).— Քեքխա՛ չենիսա... էս ինչ խալխ ա, տո՛... լեգավի՛... (Նկատում է Մարուսին, մոտենում է նրան և նստում նստարանի ծայրին): Առա-
ջ:

կմեռնի... Նա յոկ մարմնի վրա կարող է կենդանի մնալ... (Նրզում է):

ԱՆԴՈ (Հայրենադարձներին).— Ցրվե՛ք, ասում եմ... Թե չէ սրա տեղը ձեզ կտանեմ... Սա գիժ ա, խոսում ա... Դուք ինչո՞ւ եք լսում... (Փորձում է բռնել Սպիտակ մորուքավո օձիքից):

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Դա հասկանալու համար խելք պիտի ունենալ... Աստված պիտի ունենալ... Հայաստանը մարմին է... Մարմինը թե պարեց՝ մարմնի ամեն մասը կապրի... Հայը Հայաստանի նեղ օրերի համար է պետք... Հապա ինչո՞ւ դու Ամերիկա գնացիր... Հապա ինչո՞ւ դու դուրսը մնաար... Փաշա...

ԱՆԴՈ (Հայրենադարձների խմբին ցրելու փորձ է անում).— Կորե՛ք, ասի... ցրվե՛ք...

Մի քանիսը ետ-ետ են գնում, մի երկուսը քաշվում են չոքե-քարշի ետևում: Այդ ընթացքում Սպիտակ մորուքով հայր երգելով հեռանում է, Անդոն՝ նրա ետևից:

Նորեն համախմբվում են բեմի կենտրոնում: Որոշ ժամանակ լուռ են:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.—Հոս խենթերը միայն ճշմարտություն կըսեն...

Ցուցանակը հանդիմանանքով նրան է նայում: Փոքր դադար:

ՊՈԼՍԱՀԱՅ (Տխուր).— Խե՜ղճ մարդ...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ես իրեն վաղուց գիտեմ... Մենակ մարդ էր... ոչ մեկի հետ չէր խոսում...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Փոխարենը հիմա շատերու հետ կխոսի...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Դարձյալ մինակ է...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Մենք բոլորս էլ մենակ ենք։

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Դուն գոնե մեզի հետ կխոսիս։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Չէ... Ես էլ եմ երևակայության հետ խոսում... Դուք գլխի չեք... (Միծաղում է):

ՍՈՒՐԻԱՀԱՅ (Իրանահային).— Դուն գոնե մի խոսիր... Դուն երևակայություններ ղուրկ մարդ մըն ես։

ԻՐԱՆԱՀԱՅ (վիրավորված).— Էդ ինչի՞... Ոը անմախ բաներ չեմ ասո՞ւմ...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (բորբոքվելով).— Կըսեմ, աղբար... Քու ամեն բուածդ անմախություն է, իշտե:



ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Հանդարտեցեք, յավրում... Դարպ տեղը կկռվիք... (Իրանահային). Մի վիրավորվիր:

ԻՐԱՆԱՀԱՅ.— Դրանից ինչ պիտի նեղանամ... Աստված իրեն նեղացրել պրծել է:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (չհանդարտվելով).— Ինչո՞ւ:

ԻՐԱՆԱՀԱՅ.— Հեչ, էնպես...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Չէ... դուն լսե ինծի... ինչո՞ւ է Աստված նեղացուցե...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Խոսք մըն էր՝ բսավ... Դուն ալ...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Չէ... Ինծի համար պարզ էր անոր ակնարկը... Անիկա կուզե հասկցնել, որ Աստված ինծի պատժեր է՝ հայ ստեղծելով:

ԻՐԱՆԱՀԱՅ (խնդմնդալով).— Իսչ է ասում...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Է, ինչո՞ւ, աղբար, ինքը իշտե հայ չէ՞...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Թե Ամերիկային մեջ ստեղծելով պատժեր է ինծի...

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Հերիք է, պե՜... Խենթացա՞ք... Ալ գործ չունի՞ք...

Արագ-արագ դալիս է Մեծ գրպաններով հայրենադարձը, մի քիչ ուշացած, նրա ետևից դեղևելով մտնում է 36 թ. հայրենադարձը:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.—Լսեցի՞ք... կըսեն ֆրանսացիներու խումբը արդեն Բաթումին մեջն է...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Մեծ գրպաններով հայրենադարձին).— Ըսի՛ մի աճապարեր:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ճշմարիտ կըսեմ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ջեմ հասկնար՝ լուրը եթե լացի այդին հասավ, Ջեկա չէ՞ր կրնար հասնիլ։

ԻՐԱՆԱՀԱՅ (ժպտադեմ).— Ո՞ւր պիտի փախչեն՝ Թուրքիա՞...

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ (հայտնություն անելու պես).— Իրավ կըսե... Չէինք մտածեր... Թուրքիան ալ արտասահման է, իշտե։

ԻՐԱՆԱՀԱՅ (հաստատուն).— Կրոնե՞ն... Ոչ մի Թուրքիա էլ չեն գնա... Հարիֆ չեղնեք։ Կրոնեն, էն էլ ո՜նց... Ոչ մեկը չի կարողանա սահմանն անցնել։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (շարունակելով իր բարկությունը).— Անցնողը կանցնի։

Բոլորը զարմացած նայում են Ամերիկահային:

ԻՐԱՆԱՀԱՅ (ժպտալով).— Հետաքրքիր է՝ էդ ո՞վ...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Զորօրինակ՝ ես։

Դադար։

ՍՈՒՐԻԱՀԱՅ (ցանկանալով մթնոլորտը բերևացնել).— Դուն ալ իշտե երևակայությանդ հետ կխոսիս... Թող տուր, ճանըմ։
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (համառությամբ).— Ես կերթամ, աղբար... Աշխարհը պայթի նե՝ կերթամ... (Ֆրանսահային): Դո՞ւն ինչ կխորհիս...
ՖՐԱՆՍԱՀԱՅ (շրջապատին նայելով, ներողություն ասելու պես).— Ի՞նչ ըսեմ...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ես կերթամ... Ինչ ալ ըլլա՝ կերթամ։ Հոսկե մինչև Նյու-Յորք թռնել կփորձեմ կերթամ... Ի՞նչ կխընդար... Կերթա՛մ։

Նրա շրջապատի մարդիկ մեկ-մեկ սկսում են հեռանալ։ Առաջինը հեռանում է Ֆրանսահայը, հետո՝ Լիբանանահայն ու Սուրիահայը։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (շարունակելով).— Թևեր կշինեմ՝ Լենինականեն Արփայի վրայեն կթռչիմ...
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (մատը դնելով իր շուրթերին).— Սո՛ւս...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Ինչո՞ւ բերան կգոցես։ Ինչո՞ւ մատդ բերանիդ կդնես... Կվախնա՞ս... ինչո՞ւ կվախնաս... ի՞նչ պիտի ընեն... Ո՞ւր պիտի աքսորեն... Հոսկե ավելի դժոխային տեղ կրնա՞ն գտնալ...

36 թ. հայրենադարձն էլ անհետ չքանում է: Բեմը դատարկվում է: Ամերիկահայի մոտ մնում է մի հոգի: Նաև Երբանեկատ ու ամաչկոտ Պոլսահայը, որը ոչ մի կերպ չի կարողանում հաղթահարել իր անհամարձակությունը: Ու նաև, նույնիսկ հանդիսատեսից անհետ, հեռվում կանգնած է Գաղտնի գործակալը։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (Պոլսահային).— Ինչո՞ւ չորսբոլորդ կնայիս.. Ամենը գացին... Դուն մինա՞կ մնացեր ես...
ՊՈԼՍԱՀԱՅ.— Բնավ... պարզապես տիկին մը պիտի գա հոս...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ (շիջնելով իր նյարդային հուզավառությունից).— Տիկի՞ն մը... Ինչո՞ւ տիկին կըսես... Հոս քա՛ծ կըսեն։ Ջե՞ս գիտեր... Քա՛ծ ըսե, ճանըմ... Ջե՞ս ուզեր



սովետ քաղաքացի ըլլալ... քա՛ծ ըսե... Միրամին քա՛ծ ըսե, տիկնոջդ քա՛ծ ըսե...

Պոլսահայը փորձում է հեռանալ։

Կփախչի՞ս... Շուրջդ լրտե՞ս կփնտրես կոր... Մի փընտրեր... Լրտեսը հոս է։
ՊՈԼՍԱՀԱՅ (անհարմար վիճակում).— Ի՞նչ կըսես...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Նայե։ (Ցույց է տալիս հեռվում կանգնած Գաղտնի գործակալին): Կուզե՞ս կանչեմ...
ՊՈԼՍԱՀԱՅ (շփոթված, ոտից ոտ ընկնելով).— Ի՞նչ կըսես... Մի անհանգստանար...
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ.— Կանչե՞մ... Առաջին օրվնե ետևես կուգա... Փակցուցին զիս։ Անունն ալ գիտեմ։ Երբ իմացան, որ տուն դառնալ կուզեմ՝ փակցուցին ասոր...

Գաղտնի գործակալը մոտենում է Ամերիկահայի հետևից ու ականջ դնում։

Տեսա՞ր... Պետքություն չի կա կանչելու... Ի՛նքը եկավ... Հասկցող է։

Բռնազբոսիկ ծիծաղով հետ-հետ է գնում և առանց շրջվելու ամացի է տալիս: Մեկ անգամ դիպչում է Գաղտնի գործակալի ոտքին: Գաղտնի գործակալը ճանաչում է իր հին տեղը։

Կտեսնա՞ս... ձայն չի հաներ։ Կուզե՞ս թքնեմ վրան։ Միևնույն է՝ ձայն չի հաներ։ Արտաքնոց ալ կթափանցե հետս։ Ամեն տեղ կուղեկցե ավանակը... (Հետ է նայում): Որ ըսեմ՝ մեղկ է, հավատա։

## 6

Նավամարշի վրա կանգնած է Արությունովը: Լացի տակին լիքն է հայրենադարձներով: Այստեղ են նաև Անգոն, Սև վերարկուով միլիցիոներ, Ոստանողը, Հրանույշը:

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.— Товарищи репатрианты... Вопреки злопыхательству, вопреки прогнозам, вопреки предсказаниям заклятых врагов армянского народа —

прихлебателей мирового империализма — дашнаков армянский народ сегодня празднует свое возрождение. Весь мир видит торжество коммунистических идеалов. Под руководством великого вождя, великого друга народов и, в частности, армянского народа, отца мирового пролетариата, мудрого Сталина, мы двигаемся к нашей цели. И близок уже коммунизм, если вот наступил уже такой праздник у нас — у многострадального армянского народа, который кроме горя и смерти ничего не видел.

*ՀՈՒՆԱՀԱՅ* (շշուկով, Իրանահային)).— *Ի՞նչ կըսե։*

*ԻՐԱՆԱՀԱՅ* (շշուկով).— *Ասում է՝ երջանիկ ենք։*

*ՀՈՒՆԱՀԱՅ.— Ո՞վ։*

*ԻՐԱՆԱՀԱՅ.— Մենք։*

*ՀՈՒՆԱՀԱՅ.— Ապրի՜ս...*

*ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ հայերեն չի խոսիր... Ստալինին անունեն զատ բան մը չեմ հասկնար։*

*36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Գլխավորը կհասկնաս... Մնացածը հավելված է։*

*ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ* (շարունակելով).— Великий вождь народов сказал: «Армянский вопрос, который не могли решить многие государства, разрешила Советская власть». Под мудрым руководством великого вождя, под зорким оком Берия Лаврентия Павловича, армянский народ вступает в новый этап своего развития...

*ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Կհասկնամ... Հիմա ալ Բերիայի մասին կխոսի։* (Ուրախանալով, որ հասկանում է):

*ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ.—* Великая дружба наших народов и ежедневная отеческая забота великого Сталина, а также его ученика — великого Берия Лаврентия Павловича — гарантирует счастливое будущее армянского народа.

Ուրիշների երկխոսությունների վրա Արությունովը շարունակում է ճառել, բայց ոչինչ չի լսվում նրա ասածից:



*ՀՐԱՆՈՒՇ* (հիացմունքով).— *Նաա լավ մարդ է ընկեր Հարությունովը։*

*ՈՒՍԱՆՈՂ.— Ասում են։*

*ՀՐԱՆՈՒՇ.— Ես իրեն մոտիկից տեսա։ Հիվանդանոց էր եկել, երբ ես հայրիկիս մոտ էի։*

*ՈՒՍԱՆՈՂ.— Ի՞նչ ես կարծում՝ հայերենը ամենադժվա՞ր լեզուն է աշխարհում։*

*ՀՐԱՆՈՒՇ* (տարակուսելով).— *Ինչի մասին ես խոսում... Ես ասում եմ՝ ընկեր Հարությունովը շատ մարդամոտ է և մարդասեր... Հիվանդանոցի համար նոր սարքավորումներ առանձնացրեց։*

*ՈՒՍԱՆՈՂ.— Դո՞ւ էլ ես գտնում, որ հայոց լեզուն ամենադժվար լեզուն է աշխարհում։* (Ժպտում է):

*ՀՐԱՆՈՒՇ* (նույնպես ժպտալով).— *Կատա՞կ ես անում... Ինչ կապ ունի հայոց լեզուն ընկեր Հարությունովի հետ։*

*ՈՒՍԱՆՈՂ.— Ոչ մի կապ։ Ես ուղղակի ինքս ինձ մտածում եմ։*

Դալիս է Ֆրանսահայը՝ կուչ եկած, տխուր: Մոտենում է Իրանահային և Հունահային:

*ՀՈՒՆԱՀԱՅ* (Ֆրանսահային).— *Ի՞նչ է եղեր... Տխուր կերևաս։*

*ԻՐԱՆԱՀԱՅ.— Երբ էր ուրախ որ...*

*ՀՈՒՆԱՀԱՅ.— Ոչ։ Հիմա տխուրեն տխուր է։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ* (վախվորած).— *Բանաստեղծ Շահենին կճանչնայի՞ք...*

*ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Բեյրութեն եկա՞ծ էր։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Այո։* (Լռում է):

*ԻՐԱՆԱՀԱՅ.— Ի՞նչ է պատահել... Ձերբակալե՞լ են։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ոչ... Մեռեր է։ Ջոհվեր է... Մերենային տակ ինկեր է։*

*ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Անուշ տղեկ էր... Անուշ ալ քերթվածներ կգրեր։*

*ԻՐԱՆԱՀԱՅ.— Ինչի՞ համար։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Չհասկցա քու հարցդ։*

*ԻՐԱՆԱՀԱՅ.— Ասում եմ՝ ինչի՞ համար է մեքենան տակը ցցել։*

*ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Է, մեքենան որևէ բանի համա՞ր տակը կձգե... Ի՛շած ինկեր է։*

ԱՐՈՒՏՅՈՒՆՈՎ (շարունակելով).— Мы вам — нашим армянским братьям и сестрам, которые томятся вдалеке, в когтях капиталистических акул, хищников, говорим, — приезжайте на родину предков, мы вам рады. Здесь вас ждут счастье и солнечные лучи, которые исходят от Великого человека нашей эпохи и всех времен, отца нашего, мудрого Сталина.

Մեկը գոռում է «ուռա», սակայն ընդհանուր «ուռան» չի ստացվում. այդ մեկ բացականչությունը կորչում է լռության մեջ: Դողին է Նուրիահայր և մոտենում Լիբանանահային:

ՍՈՒՐԻԱՀԱՅ (շշուկով).— Ֆրանսահայերու խումբը անցեր է սահմանը:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ.— Ուրկե՞ իմացար։

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ֆրանսական ձայնասփյուռը հաղորդեց... Արդեն Մարսելին մեջ են։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ռադիոյին ես հավատո՞ւմ:

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ֆրանսայի ռադիոն սուտ չի խոսիր։

ՊՈԼՍԱՀԱՅ.— Ես ալ Թուրքերեն եմ լսած աս գիշեր, սակայն չվստահեցի... Ուրեմն իրավ է։

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Իրա՛վ է, իրա՛վ... Իրենք ալ՝ փախչողները, խոսեցին։

Լիբանանահայր յուրը փոխանցում է կողքի նայրենադարձին, սա իր կողքինին, և այսպես լուրը անցնում է ականջից ական. և բոլորը՝ խանդավառված այս լուրով, գոռում են իսկական «ուռա» ու «կեցցե»: Այդ «ուռան» եզոր է, զրավում է ամբողջ ընդմաճարթակը. և Առաջնորդը բարձրացնում է ձեռքը՝ ի նշան համերաշխության իր հոտի հետ:

7

Երեկո: Զատկերի հենց սկզբից ընդմ ողողվում է արևելյան Նրամշտության հնչյուններով: Լացի այգում մարդ չկա: Մտնում են Թուրքն ու Մարուսը:

ԹՈՒՐՔ (նայում է չորս կողմը, ծառերի արանքը, հետո Մարուսի ընի վրայի ժամացույցին).— Վեցն ա Բաքվի հաղորդումի ժամն ա... Ես ըստեղ եմ եկել։



ՄԱՐՈՒՍ (զգուշավոր).— Չգայիր...

ԹՈՒՐՔ (խեր նայացք ձգելով).— Քո խելքի բանը չի։ Ուրիշն այս ու այն կողմ նայելով): Գիտես, չէ՞, ընդ ոնց ես սպասելու։

ՄԱՐՈՒՍ (դժգոհ).— Հա:

ԹՈՒՐՔ.— Ենրանից մի ծաի, թե չէ...

ՄԱՐՈՒՍ (միանգամից փոխվելով).— Չէ, Թուրք ջան, ազի՞զ... բերանս չեմ ծռում... Համա գևո հարիֆի մոտ չէի Թրըջվելու

ԹՈՒՐՔ.— Էդպես ա պետք: Որ պետք չեղներ՝ ես կթրջվեի՞

ՄԱՐՈՒՍ.— Էդ ո՞վ ա:

ԹՈՒՐՔ (երկար լռությունից հետո).— Դոկոն ա... Լսե՞լ ես...

ՄԱՐՈՒՍ.— Ինքը՝ Դոկո՞ն...

ԹՈՒՐՔ (շատ լուրջ).— Ինքը Դոկոն:

ՄԱՐՈՒՍ.— Բա Դոկոն ի՞նչ գործ ունի էդ ֆրայերների հետ:

ԹՈՒՐՔ (մտազբաղ).— Ես էլ եմ միտք անում ու գլխի չեմ ընկնում։ (Կոշտ): Մի բան կեղնի։

ՄԱՐՈՒՍ (կատվի շարժումներով չորս կողմը տնտղում է).— Նկլրիս չի պատկում։

ԹՈՒՐՔ.— Դոկոյի անունը տալն էլ ապասնի ա։ Ռոստովում մի անգամ նրա անունը տվի՝ դանակը դրին կոկորդիս... Մինչև չհաստատեցի, որ ճանաչում եմ։

ՄԱՐՈՒՍ.— Ճանաչո՞ւմ ես

ԹՈՒՐՔ (ըմծիծաղով).— Չէ, որտեղի՞ց... Նրա կլասը ուրիշ ա... Երևանում քիչ ա ըլում։ Կամ Ռոստովում ա, կամ Թիֆլիսում, կամ էլ՝ ով գիտի որ բերդում։ Ջակոննիկ ա։ Թիֆլիսի բերդից երկու տարի առաջ միլիցիայի պալկովնիկի ֆորմայով դուրս եկավ։

ՄԱՐՈՒՍ.— Հրե՛ն, կարծես նրանք են... Իսկական ֆրայերներ... Վրեներր որ նայում եմ՝ սիրտս խառնում ա։

Այգի են մտնում Ոսանողը և Հրանույշը և աջ ու ձախ նայում։

ՈՒՍԱՆՈՂ.— Չի եկել... Մի քիչ սպասենք։ Ասաց՝ վեցին։

ՀՐԱՆՈՒՇ (ճանաչելով Թուրքին ու Մարուսին).— Ես չեմ սիրում այս այգին։ Տխուր է...

ՈՒՍԱՆՈՂ.— Ես էլ չեմ սիրում... Լացի այգի են անվանել հայ-

բնագարձները... Բայց Ստեփանը որ ժամադրել է՝ չէր կարելի չգալ: Կտեսնենք Ստեփանին և կգնանք...

ՀՐԱՆՈՒՇ (նշանացի ցույց տալով Թուրքին ու Մարուսին).— Նայիր... նրանք էլի այստեղ են:

ՈՒՍԱՆՈՂ.— Գիտեմ: Ցույց մի տա, որ նկատել ես:

ՀՐԱՆՈՒՇ.— Ես վախենում եմ, Մեխակ... Գնանք այստեղից:

ՈՒՍԱՆՈՂ.— Կգնանք... Կգնանք... Մի քիչ համբերիր: Ուզում ես՝ նստենք:

ՀՐԱՆՈՒՇ.— Չէ, Մեխակ...

Նրանք պտտվում են կանգնած տեղում և աշխատում Թուրքի ու Մարուսի կողմը չնայել:

ԹՈՒՐՔ (Մարուսին).— Առաջ դու մոտեցիր:

ՄԱՐՈՒՍ (դժգոհ).— Մոտենա՞մ... (Շարժվում է Ուսանողի և Հրանուշի կողմը):

ՀՐԱՆՈՒՇ (Ուսանողին).— Մեխակ, տես, մեր կողմն են գալիս...

ՈՒՍԱՆՈՂ.— Մի վախենա:

Մարուսը մոտենում է նրանց:

ՄԱՐՈՒՍ (կանգնելով Հրանուշի մոտ՝ սկսում է ժպտալ).— Աղիզ ջան... Աղիզներս... (Շողոմոր): Մի ներեք... Անցած օրը մի քիչ քեֆներս լավ չէր... Մարդս էր մեռել: Տխուր էի: Կներեք, աղիզներս, հանաքի համար:

ՀՐԱՆՈՒՇ (զիջված).— Ոչինչ, ոչինչ...

Թուրքն էլ իր տեղից մի քանի քայլ առաջ է անում, կանգնում տարածության վրա և ժպտում Ուսանողին ու Հրանուշին:

ՄԱՐՈՒՍ.— Հո շատ չնեղացա՞ր... աղիզ ջան...

ՀՐԱՆՈՒՇ (փարվելով Ուսանողին).— Ես աստղի՝ բոլորովին:

ՈՒՍԱՆՈՂ.— Մենք արդեն մոռացել ենք: Կարող եք հանգիստ լինել:

ՄԱՐՈՒՍ.— Որ խնդիրն քարիշենք՝ տուր քու ձեռքը: (Վերցնում է Հրանուշի ձեռքը և համբուրում):

ՀՐԱՆՈՒՇ (անճարմար զգալով՝ ձեռքը ետ է քաշում).— Ինչ եք անում:

ՄԱՐՈՒՍ.— Քի՞թ... աղիզ ջան: Բարիշեցի՞նք:



Թուրքը ևս դանդաղ մտնում է, ուսերը թափահարելով վերցնում Մեխակի ձեռքը և կիսակատակ-կիսալրջայն տանում դեպի իր ընկերները

ԹՈՒՐՔ.— Քի՞թ... եղբայր... Տեսնում ես՝ համարյա բան ա... Դու էլ նեղացել ես:

ՈՒՍԱՆՈՂ (մոլորված).— Ես չեմ նեղացել:

Թուրքը Ուսանողի թևն է բռնում ու մի կողմ տանում

ԹՈՒՐՔ (բնտանեկան).— Մանուկս, դու Դոկոյին որտեղի՞ց ես ճանաչում:

ՈՒՍԱՆՈՂ.— Դոկո՞... Չգիտեմ:

ԹՈՒՐՔ (չհավատալով).— Ազգակա՞նդ ա...

ՈՒՍԱՆՈՂ.— Չէ: Որ ճանաչեի՝ կասեի:

ԹՈՒՐՔ (մտոր մտերմաբար թափահարելով).— Լավ, լավ... Ես էլ եմ սիրում քիչ խոսող տղամարդու: Համա որ քեզ ժենկումեկը նեղացնի՝ ինձ հետ գործ կունենա: Քու քաշն էլ... (Նկատելով Ուսանողի այլափոխությունը) ներողություն, ուզում էի ասել՝ պաշտպանիդ էլ մեկն ու մեկը երևանում փիս խոսք չի ասի... (Մարուսին): Գնացինք, Սև Մարուս... (Ուսանողին): Դոկոյին մեր կողմից պրիվետ:

Թուրքը դուրս գնալու ընթացքում Ուսանողից ծածուկ բռնում է ու սրտում իր չորքերը և հեռանում: Մարուսը հեռանում է նրանց կանչեր շարժելով ու կոկետ ճայացքներ ձգելով Հրանուշի ու Ուսանողի կողմը:

Ուսանողը և Հրանուշը զարմանքից քար են կտրել:

ՈՒՍԱՆՈՂ.— Ոչինչ չհասկացա:

ՀՐԱՆՈՒՇ.— Տարօրինակ է... Բայց միևնույն է՝ վախենալու է: Գնանք, Մեխակ...

ՈՒՍԱՆՈՂ.— Վերջին Ստեփանն է գալու, անհարմար է:

Լսվում է հրապարակի ժամացույցի զանգի զարկը:

ՀՐԱՆՈՒՇ (նայելով իր թևի ժամացույցին).— Վեցն արդեն անցել է:

ՈՒՍԱՆՈՂ.— Լավ, գնանք: (Մեկ անգամ էլ չորս կողմը զննելով՝ հեռանում է Հրանուշի հետ):

Դայիս են 30 թ. Երևանյան փողոցների ու երևանյան ճաշարանքի և տանում այդտեղ Ստեփանին:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Կ'ըսեն կոր՝ հոն՝ Լացին այգիին մէջ շատերը կը գիշերեն...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Շատ բանի մի ականջեր։ Ես կրնամ առաջարկել երկու վայր՝ կայարան և Կոլխոզնիկի տուն։ Մինակ՝ ժամը տասնմեկեն ետք։ Դռան առջեւ կապանս մահճակալը տասը ռուբլի արժե, քսան ռուբլի կուտաս՝ ներս կը թողուն։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (սևեռուն նայելով 36 թ. հայրենադարձին).— Իմ ընտանիքս ո՞ւր է, գիտե՞ս...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Կայարանին մէջ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ավելի հեռու։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Արտասահմա՞ն։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Կխնդա՞ս կոր։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Է՜, վայե՞լ է... Մի վրդովվիր, ջանըմ, ըսէ, ո՞ւր է քու ընտանիքդ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Լենինականի և Կիրովականի միջև։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Չհասկցայ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ես կհասկնա՞մ կոր... Ինծի մղձավանջային երազ կերեւան կոր սա օրերը։ Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ես։ Ո՞ղջ եմ, մեռա՞ծ եմ...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ընտանիքդ ո՞ւր է... Ընտանիքդ ըսէ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (սրախփելով).— Ընտանիքս իջեցուցին գնացքէն Լենինականի և Կիրովականի միջև... Ըսի, իջան։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ո՞ր գյուղին մէջ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (զարմացած).— Գյուղին մե՞ջ... Ի՞նչ կըսես, աղբար... Հոնտեղ գյուղ չիկա... Երկաթգիծին վրան մնացին... Անապատին մէջ։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (չհավատալով).— Ինչպե՞ս...

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Երկու կոնդուկտոր մոտեցան մեզի, վրացերեն լեզվով մեզմե տոմս պահանջեցին... մենք բան մը չհասկցանք...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (հանգիստ).— Վրացինե՞ր էին։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ, աղբար... Խնդիրն ալ ատ է։ Հայեր էին։



36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (հարցաքննելու պես).— Հապա ինչո՞ւ վրացերեն կխոսեին։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատ ալ դուն պիտի ըսես։ Ես բան մը չեմ հասկնար։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (կարծես սկսել է հասկանալ, բայց շարունակում է պարզել).— Ուրեմն հայեր չէին։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հայեր էին, կըսեմ... Երբ վար իջան գնացքեն, իրար հետ հայերեն խոսեցան։ Ես աս ականջովս կլսեի կոր։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (արդեն հասկացել է, բայց համառորեն շարունակում է խոսեցնել).— Գուցե կկարծեին, որ դո՞ւք եք վրացի։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ պիտի կարծեին, երբ մենք անոնց հետ հայերեն կխոսեինք և անդադար կկրկնեինք, որ չենք հասկնար իրենց ըսածը... Անոնք իրար հետ հայերեն կխոսեին, մեզի հետ՝ վրացերեն։ Ես չէի գիտեր, որ վրացերեն է, հետո ուրիշ մարդ մը ըսավ, որ վրացերեն կխոսին։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (իր ասելիքը նրան է ուզում ասել տալ).— Ի՞նչ նպատակ կհետապնդեին կոր։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (սրտմտանքով).— Ծո, ինչո՞ւ ինծի կհարցնես, դուք ըսեք անոնց նպատակը։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հանդարտվե, աղբար... Եկուր միասին հասկնանք։ Ատ մեկ մարդու հասկնալու բան չէ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (համբերությունը հավաքելով).— Ես կըսեմ՝ ատ հարգելի լեզուն չեմ հասկնար... Հայերեն խոսե։ Եթե հայերենը քեզի պատիվ չի բերեր՝ խոսե անգլերեն... Ուզես նե՝ ֆրանսերեն... Կուզես՝ իտալերեն։ Ես վեց լեզու գիտեմ։ Ոչ, սակայն... Անոնք համառորեն վրացերեն կխոսեին։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (հանգիստ).— Հասկցա։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.—Հասկցա՞ր... Վերջապես... Ըսե՝ տեսնամ։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Որպեսզի իրար չհասկնաք։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (զարմացած).— Չհասկնա՞նք... է, բայց ի՞նչ նպատակով։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Նպատակին վերջնական բանակա-

ռութեան մէջ։ Ես տակավին չեմ թափանցած, սակայն վրային շերտը այլես կզգամ։ Չհասկնալը տարածութեան կառեղծէ կոր։ Տարածութեան վրա ինքը մեզմե բարձր կթվա յուր աչքին։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Է, ինքը հա՞յ չէ։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հայ է։ Իշտե աս է հիմնական պատճառը։ Ալ ո՞ւմ քով իններ կրնա զինք բարձր զգալ, եթե ոչ մեր քով։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Երկար նայելով խոսակցին և Երկար մտածելուց հետո).— Ստ. սա ինչ բարդ է եղեր սովետական մարդը։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ժպտում է).— Դուն ընտանիքեդ ըսէ։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Է, ի՞նչ ըսեմ... Իշտե ընտանիքս իջեցուցին երկաթգիծին վրա, ճամպրուկներս ալ դուրս նետեցին։ Տիկինս, անոր քույրը, երեք աղջիկս ու երկու պզտիկ մանչերս։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հիմա ի՞նչ կընեն։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հիմա կշարժվին կոր առանց գնացքի։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Չեմ հասկնար։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ես կոնդուկտորներուն կըսեմ՝ մեզի տակավին դրամ չեն տված։ Հրաժարվեցան հասկընալ։ Օթօ մը կանցներ, ոսկե մատանիս տվի՝ ինծի նստեցուց։ Ըսավ՝ ետ կերթա ու ընտանիքս մեկ-մեկ կտանի Նայրանդ։ Ամեն երթը՝ մեկ ոսկի մատանի, ըսավ։ Առտու, իշտե, կերթամ Նայրանդ։

Ադրբեջանական երաժշտությունը վերջանում է և այգի են սկսում մտնել 47 թվականի ներգաղթյալներ՝ մեծ ծովարներով կեպիներ գլխներին, ճակատի վրա մազերի մի փունջ, գլխի մնացած մասը խուզած, բարակ բեղերը քթի տակ։ Գալիս են նաև Մեծ գրպաններով հայրենադարձն ու Սև վերարկուով միլիցիոներ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Աս ինչո՞ւ մեկ անգամեն հայտնվեցավ ժողովուրդը։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Բաքուի երաժշտական ժամը լմնցավ։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (զարմացած).— Բաքո՞ւ կունկընդրեն կոր։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— 36 թվականին մենք ալ կզարմանա-



յինք... Ետքը սովորական դարձավ։ Ատիկա հայերուն Աստված է հոս։ Ամենքը ժամը վեցին կաճապարեն ռադիոներուն քով՝ ատ ժամը բաց չթողնելու համար։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Թուրքերեն չիքյասթա՞ կախորժին։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (անտարբեր).— Այո։ Դուն ալ կվարժվիս...
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (հակատրամաբանականը հասկանալու ճիգով).— Հապա ինչո՞ւ Թուրքերը կկոտորեին հայերուն... Ինչո՞ւ համար՝ կհարցնեմ... Հայը չիքյասթա կլսե եղեր...
ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (մոտենալով նրանց։ Վերջին բառերը լսելով).— Հայը ինտերնացիոնալիստ է, կըսեն... (Նկատում է Սև վերարկուով միլիցիոներին։ Այլափոխվելով)։ Է՜... Ի՞նչ է... Գե՞շ է... Շատ ալ աղեկ է...

Սև վերարկուով միլիցիոներ մոտենում է և բռնում, վերարկուի գրպանից ձեռքը ճարպիկ հանելով՝ ցույց է տալիս խաղաքարտերը։

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Գցե՞նք...
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ի՞նչ ըսել է՝ գցենք։ Չեմ հասկնար... Հստակ ըսէ։
ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Նո՞ր ես եկել... Ե՞րբ ես եկել...
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Այս առտու։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Դեռ չի եկեր... Ճամփուն վրա է։
ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (խոժոռ).— Հանա՞ք ես անում։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Չէ, ինչո՞ւ, ճիշտ կըսեմ։
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Իրավ կըսե, ընտանիքս տակավին ճամփուն վրա է։
ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (36 թ. հայրենադարձին).— Դո՛ւ ե՞րբ ես եկել։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (նվաղած).— Ե՞ս։
ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Հա, դո՛ւ... Բա ե՞ս։
ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (մեկուսի).— Քանի՛ կանուխ է՝ ես երթամ... (ծլկում է)։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Շուտով տասնմեկ տարի կլլա։

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (Ճենախույզ).— Դու բավեղ եղե՞լ ես։ Ինչ-որ միտս չես գալիս։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (չգիտենալով, թե որն է ճնոնտու).— Հա... չէ։ Անգամ մր։

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (փորձելով առանց համառատության).— Դցե՞նք... (Ցույց տալով խաղաթուղթը): Հը՞...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Դրամ չկա քովս։

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ.— Ոչինչ, առանց փողի...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ։ Կխնդրեմ։ Ես չեմ գիտեր... Կնեբեք, ընկեր...

ՍԵՎ ՎԵՐԱՐԿՈՒՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ (կասկածանքով նայում է երկուսի վրա).— Ախպա՞ր... Իսկակա՛ն ախպարներ եք, էլի՞... (Հեռանում է):

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (շշուկով).— Գիտես ո՞վ էր։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ո՞վ...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոստիկան։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խաղա՞լ կուզեր։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ... Բռնել կուզեր։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ համար։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ձերբակալելու համար։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ջեմ հասկնար։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ձերբակալելը անոր նպատակն է՝ խաղաթարտը՝ միջոց։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խաղալու համա՞ր կձերբակալե։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խաղալու համար ալ։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Է՞... մենք չէինք խաղար կոր։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խաղցնել կուզեր։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Մենք չխաղցանք։ Ինքը կառաջարկե, ինքն ալ պիտի ձերբակալվի։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ձերբակալելը յուր մասնագիտությունն է։ Նաև նպատակը։ Հոս պլաններ կան։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ի՞նչ ըսել է պլան։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ծրագիր ըսել է։ Կատարելիք աշխատանքի չափը։



ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատոր օգուտը ի՞նչ է։ Մենք հանցագործություն չենք ըրած։ Մենք հայրենիք վերադարձած ենք։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ըսե՝ սովետական հայրենիք։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ... Հայրենիք չէ՞ ըսվիր...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հայրենիք դաշնակցականները կըսեն։ Դաշնակցականները հայ ժողովուրդի ոխերիմ թշնամիներն են։

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ. — Ջեմ հասկնար։ Թուրքերը հապա ի՞նչ են։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (սղաձայն).— Գոցե բերանդ... Ատանկ բաներ մի խոսիր...

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Նորեն չեմ հասկնար։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Շուտով կհասկնաս։ (Ջուր կողմը նայելով): Հիմա երթանք... Տեղացիները կըսեն՝ չառեն հնոու...

Գնում են:

8

Լուսաբաց: Շոգենավի վրա բազմաթիվ հայրենադարձներ են՝ ճամպրուկները գլխների տակ, այլազան, արտասովոր դիրքերով: Մտնում է Թիֆլիսահայը՝ գլուխը վիրակապով փաթաթված. առավոտվա ցուրտը կուչ է բերել նրա մարմինը:

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (նայելով շոգենավի վրայի մարդկանց).— Էս ինչ մաղալու սիրիստիաններ են, տո՜... Պարիժից, Նյու-Յորքից եկել են, որ քուչեքում քնեն... Քուչան քուչայա... Նյու-Յորքում՝ Բրոդվեյ, բստեղ՝ Կրիվոյ... Միլիոն որ տան՝ մեր Պլեխանովսկին չեմ փոխի սաղ Հայաստանի հետ... (Գլխի ցավը զգալով՝ բռնում է գլուխը ու ճնտույքը իջեցնում նստարանին): Թովենի գեգա վատիրե...

Գալիս է Անդոն:

ԱՆԴՈ (տեսնելով Թիֆլիսահային).— Էլի դո՞ւ ես...

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Ես եմ։

ԱՆԴՈ.— Էստե՞ղ էիր քնել։

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Չէ, տո... Երազյազս հո չեմ։ Գաստինիցայում էի։
ԱՆԴՈ.— Գաստինիցայո՞ւմ։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Հա... գաստինիցայում։
ԱՆԴՈ.— Էդ որտե՞ղ... «Սևանում» ու «Ինտուրիստում» չկայիր...
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Դոմ կոլխոզնիկայում։
ԱՆԴՈ.— Ա՜... Գաստինիցա՞ ես ասում։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Գաստինիցա չի, մաշ ինչ ա։
ԱՆԴՈ.— Էստե՞ղ ինչ ես անում։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Վակզալ եմ գնում... Հետ եմ գնում Թիֆլիս։
ԱՆԴՈ.— Բա ճամպրուկդ ո՞ւր է։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (միանգամից չհասկանալով, հետո հանկարծ մտաբերում է).— Չամադա՞նս... (Տատանվելով)։ Եսիմ... կորցրել եմ։
ԱՆԴՈ.— Որտե՞ղ... էդ ո՞նց...
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (հանկարծ բորբոքվելով).— Ոնց ու դու լավ կընաս։ Երևանում կոմշի չեն սիրում։ Չամադանս բացեցին բլատնոյները՝ մեջը կոմշի որ տեսան, շատ նեղացան... (Բռնում է գլուխը)։
ԱՆԴՈ.— Հասկանալի է։ Սեծել են։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (կեցվածքով).— Սեծել են՝ չէ մի։ Ջուչկա խոմ չեմ։ Էնպես խոսեցինք։
ԱՆԴՈ.— Հասկանալի է... Ովքե՞ր էին՝ հիշո՞ւմ ես արտաքինը։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Մութ էր։
ԱՆԴՈ (երկիմաստ).— Պանյատնո։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Գոտրի խալխ են էս էրևանցիները։ Հետո էլ՝ կոմշիին մաշինկա են ասում։
ԱՆԴՈ (սևեռուն).— Մաշի՞նկա էիր բերել։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Դու խոմ տեսար... Դու խոմ չամադանս բաց արեցիր... Տեսար, չէ՞, որ կոմշի էր...
ԱՆԴՈ (կարծես չհավատալով).— Հա... սերկևիլ էր։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Սերկևիլ, էլի, կոմշի... Իրենք էլ մաշինկա էին ասում։
ԱՆԴՈ (ենթաժպիտ).— Մաշինկան տարբերակն է։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (վախեցած).— Չէ տո... դամբաչա՞...
ԱՆԴՈ (խիստ).— Արի ինձ հետ։



ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Ո՞ւր։
ԱՆԴՈ.— Էնտեղ կիմանաս։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (խուճապահար).— Ինչի՞ համար... Ես ինչ իմանամ մաշինկան ինչ ա։
ԱՆԴՈ.— Արի, ասում եմ, էնտեղ կիմանաս։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ (խնդրագին).— Ասեցիր՝ իմացա, էլի... Ուրիշ ի՞նչ իմանամ։ Կոմշին սերկևիլ ա, մաշինկան տարբերակ ա, տարբերակը պիստալետ ա։
ԱՆԴՈ.— Հետևիր ինձ։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Ախպոր պես... պոեզդից կուշանամ... Քարն ընկա՞ Երևան եկա... Գլուխս ջարդեցին, չամադանս խլեցին, փողերս գողացան, ինձ էլ ասում ես՝ հետևիր։
ԱՆԴՈ.— Էնտեղ կպարզենք։
ԹԻՖԼԻՍԱՀԱՅ.— Քարն ընկա՞, որ հայ եմ, քարն ընկա՞, որ Երևան եմ եկել... (Հեռանում Անդոյի հետևից)։ Դուռակ եմ, էլի, ազգս փոխեի՝ միանգամից ամեն ինչ կդզվեր... Դուռակ եմ, էլի...

Գնում են։ Ճոպալարի վրայի հայրենադարձները կամաց-կամաց արթնանում են և սկսում իջնել ցած՝ պուրակ։ Խոսում են իրար հետ, տեղավորվում նստարաններին, և Լացի այգին վերստին աշխուժանում է։ Գալիս են Իրանահայը, Հունահայը, 36 թ. հայրենադարձը, Սուրիահայը, Պոլսահայը։ Ներս է ընկնում այլայլված Ֆրանսահայը։

ԻՐԱՆԱՀԱՅ (տեսնելով Ֆրանսահայի վիճակը).— Ի՞նչ է պատահել... խոսի՛ր։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (նույնպես մտնելով Ֆրանսահայի վիճակի մեջ).— Հանգստացիր... Ամեն ինչ անցողական է... Ռուսները կըսեն՝ «Պերեմոլետսյա՝ մուկա բուդետ...» կը հասկնա՞ս։ Կնշանակե՝ «Կաղացվի՝ ալյուր կդառնա»։
ԻՐԱՆԱՀԱՅ.— Ինչի... Հայերը ավելի լավ են ասել՝ «Օրեր են, կմթնեն, անց կկենան»...
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Ատ մենք շատվընե գիտենք։ Թումանյանին բանն է։
ՀՈՒՆԱՀԱՅ.— Թումանյան բոլշևիկ էր։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Ֆրանսահային).— Հանգստացի՛ր... Բան մը չկա աշխարհիս երեսին, որ արժանի ըլլա մարդու այլայլմունքին։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (հուսահատ, խզածայն).— Նկարիչ Պասկալյան ինքզինքը վերջ տվեր է...

ԻՐԱՆԱՀԱՅ.— Վա՜յ տղա...

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ամա՜ն...

ՊՈԼՍԱՀԱՅ.— Կրնա ըլլալ խոսք խորաթա՞ է։

ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Խեղճ է գտնվեր։ Բոլորս ալ ինքնասպան պիտի ըլլանք... (Օղու սրվակը դնում է բերանին):

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ֆրանսայե՞ն էր։

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Մարսելեն... Պայծառ մարդ մը, պայծառ նկարիչ... պայծառ հայ... Մարսելին մեջ հռչակ վայելող նկարիչ մ'էր։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հասակո՞վ էր...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Տակավին երիտասարդ... Պայծառ մարդ։ Պայծառ նկարիչ։ Միշտ հոս կուգար։ Կխորհեր։ Ղրկեցին Լենինական։ Իր բնակարանին երկրորդ հարկեն ինքզինքը վար նետեր է։

ԻՐԱՆԱՀԱՅ.— Խե՜ղճ տղա... Կարող է սա՞ղ է մնացել։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (կսկիծով).— Ոչ... աղբար... Ջարդուխուրդ եղած է։ Նուրբ տղա մ'էր... Պայծառ մարդ... Պայծառ հայ... (Լալիս է):

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հայը իրավունք չունի ինքնասպան ըլլալու։ Իրավունք չունի։

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ով կհարցնե իրավունք։

ՊՈԼՍԱՀԱՅ (շշուկով).— Ինքնասպանության համա՞ր ալ իրավունք պիտի առնվի։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (գլխով է անում).— Պետությունը քեզի համար կհոգա։

ՊՈԼՍԱՀԱՅ.— Իրավունք չունենք նե՞ ի՞նչ կըլլա։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ես 36 թվին եմ եկեր։ Եվ կամ։ Հայը իրավունք չունի ինքնասպան ըլլալու։

Լռություն։

ՖՐԱՆՍԱՀԱՅ (ճնշված).— Սա ճամփա է դեպի պատմություն։ Մեր պատմության դուռն է նորեն բացվեր։ Ես Ֆրանսա կապրեի և կկարդայի մեր մեծ... Հայոց պատմությունը։ Ու ատիկա պատմություն էր։ Անգամ Մեծ եղեռնը պատմություն էր, որ չպիտի հասներ, չպիտի դիպչեր որևէ իր կազմով Սան-Ժերմեն փողոցին վրայի իմ տանիս, իմ առանձին նախամուտքիս, որ Ֆրանսուա՛ի կոնսերվը կպահպաներ։ Ես կկարդայի պատմություն մը հայի սասապանների, պայքարին, անձուկ օրերուն մասին՝ կաշկանդանքներուն մեջ... Անիկա պատմություն մ'էր... Ես կկարդայի հայ արքաներու մասին, որոնց գլուխները կհասնեին Հռոմի պալատներու մեջ... Հայ իշխաններու մասին, որոնք կպայքարեին կյանքի տևողության համար... Ես չէի մտածեր, որ պատմությունը ժողովուրդին ճակատագիրն է։ Մեզմե յուրաքանչյուրը պիտի մտնա հայոց պատմությունը, պիտի մտնա յուր ճակատագիրը։ Հիմա բացվեր է դարպասը մեր պատմության... Է՛, աղբարներ... մտնանք մեր պատմությունը... մեր հարազատ պատմությունը... Մեր հայոց պատմությունը... Մտնանք մեր ճակատագիրը։ (Լալիս է):

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հանդարտվի՛ր, աղբար... Մեր պատմությունը ուրիշներեն գեշ չէ։ Մենք կա՛նք։ Կտեսնա՞ս... Մենք կապրինք։ Մենք աշխարհի վրա ենք։ Մենք Հայաստանին վրա ենք...

ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Աս Հայաստան չէ... Աս Լացի այգի կկոչվի։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (համառորեն, սփոփիչ).— Մենք Հայաստանի հողին վրա ենք... մենք մեր երկրին մեջ ենք... մե՛ր երկրին... Կհասկնա՞ս թե ինչ կնշանակե... Մենք Հայաստանի վրա ենք, մնացածը պզտիկ բան մ'է։ Պատմության փոշի... (Փոքր դադարից հետո): Իհարկե, ափսոս էր Պասկալյանը... Ողորմի անոր հոգուն։

ՍՈՒՐԻԱՀԱՅ (օղու սրվակը կրկին է մեջ բերում).— Խմենք մեկ հայու հոգիին ու ողորմաթասը։ Բանե՛։ (Սրվակը տալիս է Ֆրանսահայի ձեռքը): Խմե՛։

Ֆրանսահայը երկար նայում է սրվակին ու վերջապես դնում շուրթերին և մի կում անում։ Ապա սրվակը հանձնում է Իրանահային։

ԻՐԱՆԱՀԱՅ (սրվակը մոտեցնելով շուրթերին).— Ողորմի մեկ հայի հոգուն ևս։ (Խմում է):

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (վերցնելով սովակը).— Ողորմի մեկ հայու հոգիին ես (խմում է և փոխանցում Հունահային):

ՀՈՒՆԱՀԱՅ.— Ողորմի մեկ հայու հոգիին ես (խմում է):

Սովակը նրա ձեռքից անցնում է ձեռ, որտեղ տարբեր հայրենադարձներ են, և խորքից արդեն չի երևում, բայց ամ չորրորդից է լսվում՝ «Ողորմի մեկ հայու հոգիին ես»... Վերջապես սովակը գնում է վեր՝ չոգեմարչի վրա մնացած Զառամյալ հայրենադարձի մոտ:

ԶԱՌԱՄՅԱԼ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ողորմի մեկ հայու հոգիին ես...

9

Արևոտ կեսօր: Պուրակում ոչ մարդ կա: Խորքի նստարանին տեղավորվել է Կարճ շալվարով հայրենադարձը և դասավորում է ծնկներին շարած թղթերը: Մտնում են Առաջին և Երկրորդ խուժանները.

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (նայելով չորսբոլորը).— Էս ո՞ւր են ախպարները... չեն երևում:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Սովետական արևին չեն դիմանում, ծակուծուկ են մտել:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (նկատելով Կարճ շալվարով հայրենադարձին).— Հրես մեկը... (Գնում է նրա կողմը և նստում կողքին: Երկրորդ խուժանը ևս մոտենում է նրան և նստում մյուս կողքին):

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ (Կարճ շալվարով հայրենադարձին).— Ախպար... պապիրոս չունե՞ս...

Կարճ շալվարով հայրենադարձը՝ իր թղթերով տարված, չի լսում:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (Կարճ շալվարով հայրենադարձին).— Քե՛զ են ասում... չես լսո՞ւմ: (Ձեռքը դնում է նրա ուսին):

ԿԱՐՃ ՇԱԼՎԱՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (գլուխը բարձրացնելով թղթերի վրայից).— Ինծի՞ կդիմեք... հրամմեցե՛ք... (Տեսնելով, որ խուժանները նայում են իր թղթերին, ժպտում է): Ատ քարտերը շատ են, չեմ գիտեր ի՞նչ ընեմ ատոնք...



ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Անկետաներ են, բա ո՞նց...

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Հանաք հո չի: Սովետական քաղաքացի ես դառնալու: Առանց թղթերի չի լինի:

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ափրայիր).— Այո, այո... Հարկավ: Կհասկնամ: (Ուշադիր նայելով խուժաններին): Դուք ալ այսչա՞փ թուղթ ունիք:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Դեռ մի բան էլ ավել:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Ես էլ կարծեցի գալիս ես բերել արտասահմանից: Ասում են՝ ֆաբրիկա էլ են բերել հետները...

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ... Իմ բերածը բան մը չէ: Տասնչորս հատ ռատուզարեկներ օթո...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Ջէ՞ մի...

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Իմ մասնավոր կառանոցեն են: Հիսուն հատ էր: Միայն տասնչորս հատ թող տվավ Հայաստանի կառավարությունը:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ.— Այ քեզ հարիֆ... Տասնչորս մեքենա ունես, բա մի շալվար չճարեցի՞ր, որ էս պիոներականով ես նստել:

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (կատակի վերածելով).— Ճիշտ կըսեք: Արդար է: Հոս չեն հագնիր շորտ, ըսել է՝ կարճ շալվար:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ (նենգամիտ).— Մի ժամանակ մեր երկրում բեղից մազ էին պոկում ու տալիս մուրհակի փոխարեն: Ջիննի դու էլ ոտքիդ մազերից ես պոկում, հը՞... (Ծիծաղում է և նրա ոտքից պոկում մի մազ):

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ (նույնպես պոկելով նրա մյուս ոտքից մազ).— Էս տասը մանեթ...

Կարճ շալվարով հայրենադարձը բնակա ցավ է զգում, սակայն այս ամենը ընդունում է որպես կատակ: Խուժանները շարունակում են երկու կողմից պոկոտել նրա ոտների մազերը: Ու դժվար է հասկանալ՝ կատա՞կ է, թե՞ արդեն կռվի ծաղր:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Էս հարյուր մանեթ... էս էլ՝ հազար: (Թոթովելով): Հավ էլ փոշոտն ես:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒԺԱՆ (պոկելով մազերը).— Իսկական կապիտալիստ ես: Ինչքան պոկես՝ բան չի պակասի:

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ցավից հետզհետե այլափոխ-

փելով ու զգալով, որ նրանց արարքը կատակից անցնում է).— Ծո՛... կցավի՛... ի՛նչ կրնեք... Դադրեցե՛ք... Կցավցնեք կոր... Բավակա՛ն է, ծո՛...

ԱՌԱՋԻՆ ԽՈՒԺԱՆ.— Բա որ պրոյեկտորներին թալանում էիր՝ չէր ցավեցնո՞ւմ...

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչ կրսեք, ծո՛... Ի՞նչ պրոյեկտորներ, ի՞նչ կրսեք...

Դուրս են Ստեփանը և Ուսանողը. Տեսնելով այս բոլորը՝ Ստեփանը մոտենում է խուժաններին և բռնում մեկի մազերից ու բարձրացնում նրան նստարանից: Մյուս խուժանը դանակով հարձակվում է Ստեփանի վրա, բայց Ստեփանը մի ճարպիկ շարժումով խուսափում է հարվածից ու խփում նրա այտոսկրին, ապա՝ որովայնին. խուժանը կուչ է գալիս և տապալվում: Ստեփանը, առաջինին էլ մազերից բռնելով, բարձրացնում է գետնից ու երկուսին միասին դուրս հրում պուրակից: Ուսանողը զարմացած դիտում է, թե ինչպես փոքրամարմին Ստեփանը կարողանում է այսքան համարձակ վարվել խուժանների հետ:

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Շնորհակալությո՛ւն, երիտասարդ... Բայց մեղք էին, հայեր են...

ՍՏԵՓԱՆ (թեթև ժպտալով).— Երկար շալվար հագիր, ախպերացու... Ոտքերդ ծածկիր, էստեղ բաց լինել ընդունված չէ: Աշխատիր ծածկել ամեն ինչ...

ԿԱՐՃ ՇԱԼՎ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (երախտապարտ).— Նկատի կունենամ... Ներող կըլլաք... Շնորհակալությո՛ւն... (Գնում է):

ՈՒՍԱՆՈՂ (հիացած).— Էդ ո՞նց...

ՍՏԵՓԱՆ.— Նստի՛ր:

Նրանք տեղավորվում են նստարանին:

ՈՒՍԱՆՈՂ.— Մտքիցս չէր անցնի, որ կարելի է էդպես...

ՍՏԵՓԱՆ.— Դրանք աղբ են:

ՈՒՍԱՆՈՂ.— Մարդիկ վախենում են նրանցից:

ՍՏԵՓԱՆ.— Բնությունը ամեն ինչ կարող է ներել՝ թուլությունից բացի:

ՈՒՍԱՆՈՂ.— Դարվինն է:

ՍՏԵՓԱՆ.— Չէ, ես եմ ասում: Սովորիր ուժեղ լինել: Դա ամենամեծ իմաստությունն է: Բնության իմաստությունը: Բարու մասին հետո կմտածես:



ՈՒՍԱՆՈՂ.— Դա առանց մտածելու է լինում:

ՍՏԵՓԱՆ.— Իսկ ես մտածում եմ:

ՈՒՍԱՆՈՂ.— Բարո՞ւ մասին:

ՍՏԵՓԱՆ.— Չէ: Իշխանության:

ՈՒՍԱՆՈՂ.— Իշխանությա՞ն...

ՍՏԵՓԱՆ (նշանացի ցույց տալով).— Տեսնո՞ւմ ես արձանը:

ՈՒՍԱՆՈՂ (նայելով նրա ցույց տված ուղղությամբ).— Լենի՞նը...

ՍՏԵՓԱՆ.— Ավելի էն կողմ:

ՈՒՍԱՆՈՂ.— Ստալի՞նը...

ՍՏԵՓԱՆ.— Լենինից մեծ են շինել:

ՈՒՍԱՆՈՂ (ուրիշ տրամադրությամբ).— Աշխարհի ամենամեծ արձանն է... Ասում են՝ Արարատի հետևից թուրքերն էլ են դիտում...

ՍՏԵՓԱՆ (կարծես մտքի մեջ).— Թուրքերն էլ են ուժեղ:

ՈՒՍԱՆՈՂ (չընդունելով).— Բարբարոսներ են:

ՍՏԵՓԱՆ.— Դրա համար էլ ուժեղ են... (Փոքր դադարից հետո): Դրա համար էլ կկորչեն:

ՈՒՍԱՆՈՂ.— Չեմ հասկանում... Բա ասացիր ուժեղ են:

ՍՏԵՓԱՆ.— Դու էլ ասացիր՝ բարբարոսներ են... Դրա համար էլ կկորչեն: Վերջիվերջո կկորչեն, եթե չփոխվեն:

ՈՒՍԱՆՈՂ (հետաքրքրասիրությամբ, կարծես նորովի բացելով Ստեփանին).— Ո՞նց պիտի փոխվեն:

ՍՏԵՓԱՆ.— Ուժը պիտի մարմնի ձևերի մեջ դրվի: Ուժը հիմա շատ հարաբերական տեսակ ունի: Տակը պիտի բնության ճշմարտությունը լինի, վերևը՝ մարդկային ցիվիլիզացիայի... Համբերիր: (Երազելով): Էդ ժամանակ՝ ես Հայաստանի քարտուղարը կդառնամ:

ՈՒՍԱՆՈՂ (ապշած).— Կուսակցությա՞ն...

ՍՏԵՓԱՆ (հասարակ).— Հա... Ինչի՞ ես զարմանում... Էսպիսի բաներ չեն ասում, բայց ես քեզ սիրում եմ... Ու վախենում եմ կորչես էս կեղտոտ ու սուտ կյանքի մեջ: (Դադարից հետո): Ու նաև հասարակ: Մենակ թե՝ պիտի կարողանաս չբարդացնել: (Արձանի կողմը): Դրա համար եմ հարգում նրան. ամեն ինչ հասարակ ու հեշտ է տես-

նում, ոչինչ չի բարդացնում: Մարդկանց սարբովի սիրուն
սուար գեկարացիան հասցնում է բնության իմաստությա-
նը, բնականությանը...
ՈՒՍԱՆՈՂ.— Նոր բաներ ես ասում:
ՍՏԵՓԱՆ.— Ոչ մի նոր բան չկա: Դու ես ինձ կարդացել Նիցշե
ու Հոռմի պատմություն: (Մի քիչ իր մեջ իջնելով): Բայց
ես նաև կապրիզ ունեմ: Քեզ նմաններին օգնել: Դա միակ
սխալն է իմ մեջ... (Ժպտալով): Մի ներդաշնա, էգ իմաս-
տով չեմ ասում... Մեծ հաշվով: Երբ կլինեմ Երևանի կամ
Մոսկվայի Կենտրոնում՝ քեզ ու քեզ նմաններին չեմ մո-
ռանա... Իսկ դու լսիր ասածս ու մոռացիր:
ՈՒՍԱՆՈՂ.— Հապա ինչո՞ւ ես ասում:
ՍՏԵՓԱՆ.— Որպեսզի ասածս իջնի քո մտքի տակը... Ու մեր-
վի վարքի հետ: Դրդիչ ուժը պիտի դառնա: (Հեռվում
հայտնվող Սուրխանդայի կողմը): Թե չէ՝ սրանց օրին կընկ-
նես... Ու միշտ կհայտնվես Լացի այգում... (Ժպտում է):
Կարծես էս այգին էգպես են հիմա կոչում:
ՈՒՍԱՆՈՂ (տխուր).— Էլ ինչից է պետք գիտելիքը...
ՍՏԵՓԱՆ.— Արտաքին գործողությունների համար: Տեսանելիի
համար... Հիմա ժամանակները ոչինչ են դառնում... Սր-
կու շերտ պիտի ունենաս... Ջինջիդ խաղը վերջացավ...
Աստառ դարձավ:

Մտնում է Գաղտնի գործակալը և նստում նրանց կողքին: Ստե-
փանը կերպարանափոխվում է: Գաղտնի գործակալին:

Արա... էս ընկերդ ո՞ւր ա, չի երևում...
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ.— Ի՞նչ ընկեր...
ՍՏԵՓԱՆ.— Լավ... ախպերացու... էն ամերիկացի ախպարը...
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ (խուսափելով).— Ես ոչ մի ամերիկացի
ախպար չեմ ճանաչում:
ՍՏԵՓԱՆ (կեղծ զարմանքով).— Ինչ ա ասում... Միշտ միա-
սին էիք: Ըստեղ էլ կարծում էին՝ յուղգյարդ ա:
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ (շփոթված).— Չէ մի...
ՍՏԵՓԱՆ.— Մի պիվա կխմե՞ս... Գնանք, հը՞...
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ.— Ծսիմ...
ՍՏԵՓԱՆ (երկիմաստ).— Թե՞ գործ ունես ըստեղ:
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ (այլայլված).— Չէ, ինչ գործ:



ՍՏԵՓԱՆ (նրա թևը բռնելով).— Ուրեմն գնանք, ալյոշա...
Ախպարները լացից զատ բան չեն կարող անել...
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ.— Իմ անունը Ալյոշա չի:
ՍՏԵՓԱՆ.— Որ բանից ա, գնանք, ալյոշա: (Ուսանողին): Դու
էլ գնա ինստիտուտ, դասից չուշանաս...

Ուսանողը գլխով է անում, բարձրանում է տեղից: Գալիս է հայ-
րենադարձների մի խումբ: Ստեփանը Գաղտնի գործակալին տանում
է դուրս: Ճանապարհին հանդիպում է Անդոն:

ԱՆԴՈ (Ստեփանին).— Բարև, Ստեփան:
ՍՏԵՓԱՆ.— Պիվա չե՞ս ուզում... Ալյոշայի հետ գնում ենք
խմելու: Լավ տեղ ա իմանում:
ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱԿԱԼ (զարմացած).— Ե՞ս...
ԱՆԴՈ.— Չէ, Ստեփան ջան... պոստի վրա եմ... Էսօր ախ-
պարներով լիքը բարաքան է եկել: Մյուս անգամ...
ՍՏԵՓԱՆ.— Դու գիտես: (Գաղտնի գործակալին): Մենք գնա-
ցինք, չէ՞...

Գնում են: Հայրենադարձների խմբից անջատվում և բեմառաջ
են գալիս Իրանահայն ու Ֆրանսահայը:

ԻՐԱՆԱՀԱՅ (շշուկով).— Ամերիկահային ձերբակալել են...
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Ի՞նչ կըսես...
ԻՐԱՆԱՀԱՅ.— Հաստա՛տ: (Մեծարանքով): Երկիր եմ ասում, է՛:
ՖՐԱՆՍԱՀԱՅ (ցածրաձայն).— Շատ կհոխորտար: Փախչիլ կու-
զեր: (Բարձրաձայն): Դրախտ եկեր էր էշեկը ու փախչիլ
կուզեր: Հայրենիքին արժեքը չէր հասկնար... Ամերիկա-
ցիեն ինչ կսպասես կոր, ազբար: Ատ է, իշտե, անոր
խելքը...
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (մոտենալով նրանց).— Ի՞նչ է եղեր...
ՖՐԱՆՍԱՀԱՅ (Իրանահային).— Ըսե՛:
ԻՐԱՆԱՀԱՅ.— Դու լեզու չունե՞ս... Դո՛ւ ասա:
ՖՐԱՆՍԱՀԱՅ (սրտմտանքով).— Է՜, լուրը առաջինը դուն
լսի՞ր...
ԻՐԱՆԱՀԱՅ.— Դուն էլ երկրորդը ասա, ինչ կլինի:
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Բան մ՚ալ չըլլար: Սակայն ես քուկին հավաս-
տիությունդ չունիմ:

ԻՐԱՆԱՀԱՅ.— Ուրեմն՝ չես հավատում ինձ։
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Քեզի կհավատամ, լուրին վրա կրնամ վստահ ըլլալ։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ կկռվեք, ճանըմ… Մեկերնիդ, իշտե, ըսեք…

Լռություն։

Ձեր ուզե՞ր ըսել…

Լռություն։

Կուզե՞ք ես ըսեմ։

Իրանահայն ու Ֆրանսահայը սևեռվում են նրա վրա։

Ամերիկահային ձերբակալեր են։ Ա՞ս է։
ՖՐԱՆՍԱՀԱՅ (նայելով Իրանահայի կողմը).— Ա՛ս է։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատ ի՞նչ նոր լուր է։ Ամենն ալ գիտեն։ Բանտարկությունը ծրագրված էր Ամերիկահայի մեջ։
ԻՐԱՆԱՀԱՅ (կատակով).— Դուրս է գալիս՝ Ամերիկայում ուզում էր բանտարկվել՝ չկարողացավ, էստեղ եկավ, որ բանտարկվի…
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Մի խնդար, ծո՛…

Դալիս է Սպիտակ մորուքով հայը։ Վերստին ձեռքը պարզած. վերստին երգելով։ Բոլորը սսկում են։

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Կռունկ, ուստի կուգաս… (Կանգ է առնում Ֆրանսահայի դիմաց)։ Դո՞ւ… Դու ո՞ղջ ես մնացել, զավակս…
ՖՐԱՆՍԱՀԱՅ (շփոթված, վախեցած).— Ե՞ս… Ինչո՞ւ պիտի ողջ չմնամ…

36 թ. հայրենադարձը Ֆրանսահային շարժումներով ցույց է տալիս, որ լուրջ չընդունի նրա խոսքերը։

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Ֆրանսահայի ականջին).— Նա քեզ չի ասում… Նա իր երեակայության հետ է խոսում…
ՖՐԱՆՍԱՀԱՅ (փոքր-ինչ հանդարտվելով). — Կհասկնամ… Սակայն ինչո՞ւ ինձի ընտրեց…
ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Դու կարո՞ղ ես ողջ մնալ…



Սարգիս Կուկունյանց, զավակս… Պետերբուրգի համալսարանի ուսանող։ Թողեցիր ուսումդ և քեզ նման հայրենասերների հետ գնացիր Թուրքիայի սահմանը և կռվի բռնվեցիր Թուրք ասկյարների հետ… Տասնհինգ հոգի էիր… տասնհինգ հայ… (Դիմելով մեկ-մեկ մնացածին)։ Ղարաբաղցի Արրահամը… (դիմելով մյուսին) շուշեցի Ջաղարբեկյանը… (դիմելով հաջորդին) դարալագյազցի Տեր Գրիգորը… (մատը դնելով հաջորդի վրա) ալաշկերտցի Հարությունը… (մյուսին) մշեցի Սարգիսը… (նս մեկին) էրզրումցի Կարապետը… (հաջորդին) թիֆլիսեցի Սմբատը… (մյուսին) ալեքսանդրապոլցի Տիգրանը… (կողքինին) ռոստովցի Միքայելը… (հաջորդին) երևանցի Սողոմոնը… (մյուսին) վանեցի Հմայակը… (օդի մեջ) բիթլիսցի Արամը… (ավելի վեր) կարսեցի Աշոտը… Տասնհինգ հայ երիտասարդներ… Թուրք զինվորականները մի կողմից, ռուս կազակները՝ մյուս. ձեզ նեղը գցեցին, մնացիք երկու կրակի արանքը՝ երկու մեծ պետությունների զորքերի միջև… (Դիմելով Իրանահային)։ Քեզ սպանեցին Թուրքերը… (Դիմելով 36 թ. հայրենադարձին) Քեզ՝ ռուսները. մնացածից էլ ռուսական բանակը գերի վերցրեց ու աքսորեց Սախալին… Հայ հեղափոխականներից՝ որպես ավազակների… Սախալին… Սիրիր… Լոս Անջելես… Բեյրութ… Փարիզ… Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս… (Հեռանում է)։
ՍՈՒՐԻԱՀԱՅ.— Հայրենիքի ցավեն ալ մարդ կխենթանա՞…
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— 36 թվականին էլ մեկը հենց սրա նման էր…
ԻՐԱՆԱՀԱՅ (Ժմծիծաղով).— Ինչ է՝ քրոնիկակա՞ն ցավ է։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Հայկական ցավ է։
ՖՐԱՆՍԱՀԱՅ.— Հավերժական է։
ՍՈՒՐԻԱՀԱՅ (երկչոտ).— Հավերժական… Վերջ չի՞ պիտի ըլլա… (Հանում է իր սրվակը և պտտեցնում ձեռքերի մեջ)։
36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ոչ։ Ատիկա վերջ չունի։ Քանի կա հայը՝ վերջ չունի…

## 10

Ուշ գիշեր։ Ճոգեմարզը մութի մեջ է, և նրա վրայի՝ տարբեր գիրերով տեղադրված հայրենադարձների միայն ուրվագծերն է երևում։ Լուսավորված է լոկ բեմի կենտրոնում բլինդաժով դեպի ճանապարհատեր գրված ճառարանը, որի վրա նստած են Թուրքն ու Մարուսը։ Մարուսը համբուրում է Թուրքի ոտքը, կզակը…

ԹՈՒՐՔ.— Հերիք թքոտես։

ՄԱՐՈՒՍ.— Աղի՛զ… (Նարուճակում է փաղաքշել Թուրքին):

ԹՈՒՐՔ.— Էս ո՞ւր են կորել ախպարները։

ՄԱՐՈՒՍ (վերացած, տենչոտ).— Դրողի ծոցը…

ԹՈՒՐՔ.— Կարող է տուն են ավել սաղին։

ՄԱՐՈՒՍ (ծիծաղից փռքկում է Թուրքի պարանոցին):

ԹՈՒՐՔ (ջղայնացած).— Չաթլախի քած… Ի՞նչ ես փռշտում երեսիս։ (Զզվանքով մաքրում է իր դեմքը):

ՄԱՐՈՒՍ.— Ծիծաղեցնում ես… ես ինչ անեմ։ (Ինքն էլ օգնում է Թուրքի դեմքը սրբելուն): Մի նեղանա, աղիղ ջան… տրիպեր չունեմ։

ԹՈՒՐՔ.— Ի՞նչ գիտես։

ՄԱՐՈՒՍ.— Յա՜…

ԹՈՒՐՔ.— Տես, հա…

ՄԱՐՈՒՍ.— Վայ… Թուրք ջան, աղիզս… (Նորից փաղաքշում է):

ԹՈՒՐՔ (ձեռքը տանելով Մարուսի ծնկների արանքը).— Թյու քու… Հավես կոտրում ես։ (Ձեռքը ետ է քաշում):

ՄԱՐՈՒՍ.— Ախ՜… աղիզ ջան։

ԹՈՒՐՔ.— Էդ ի՞նչ ա հագիդ։

ՄԱՐՈՒՍ.— Յա՜… Ինչ պիտի լինի։ (Ծիծաղում է: Կեղծ ամաչկոտությամբ): Դու էլ կասես, էլի…

ԹՈՒՐՔ.— Սուխումցի Գալյային գիտե՞ս… Մի օրով եկել էր Երևան։ Տղերքը իրար էին սպանում։ Սաղ նրան էին ուզում։

ՄԱՐՈՒՍ (փնթված).— Սիրո՞ւն էր։

ԹՈՒՐՔ.— Չէ, Դու նրանից սիրուն ես։

ՄԱՐՈՒՍ.— Սպիտա՞կ էր։

ԹՈՒՐՔ.— Չէ, էդ նշանակություն չունի։



ՄԱՐՈՒՍ (խռովկան).— Բա ի՞նչ։

ԹՈՒՐՔ.— Տրուսիկը չոլկովի էր… Քած եմ ասում, է՜…

Լուսավորվում է ցոգեմարզի հակառակ մասը։ Սեղանի դիմաց նստած կանգնած են Բերիան և Բաղիրովը։

ԲԵՐԻԱ (նայելով Թուրքին ու Մարուսին).— Թուրքական խմբերիան հարյուր տարվա ընթացքում էլ չկարողացան արդյունքի հասնել։ Մարմինն էին խլում։ Իսկ հայը առանց մարմնի էլ կարող է ապրել։ Մի մարդ էլ որ մնա՝ իրենց ցեղը ֆանատիզմը պիտի ապրեցնի։ Հոգին պիտի հանենք, թող մարմինը մնա։

ԲԱՂԻՐՈՎ (նայելով Թուրքին ու Մարուսին).— Մալադե՛ց, Լավրենտի… Դեռ 18 թվին ես քեզ հասկացա։ Եղոր չի, որ խազերին էդպես գնահատում է քեզ։

ԲԵՐԻԱ.— Մարմինը թող մնա։ Որ ոչնչացնի ոգին։ Մարմնից ավելի մեծ թշնամի չունի ոգին։ Մարմինը նրան կիջեցնի, խուժան ու գյադա կդարձնի, կխլի լեզուն, մեկմեկու ատել կտա, ամոթալի ու խայտառակ միմյանց սերելի կդառնա հային… Հայը կհայհոյի Հայաստանը, կզզվի Հայաստանից։ Միայն հայը կարող է ոչնչացնել Հայաստանը։ Ոչ թե դու պիտի գոռաս՝ «Կորչի Հայաստանը», նա պիտի զզվանք զգա ինքն իրենից, իր պատմությունից, իր նախնիներից, իր հորից ու մորից, իր լեզվից ու կերպարանքից… Միայն էդպես կարելի է ոչնչացնել Հայաստան գաղափարը։

ԲԱՂԻՐՈՎ.— Դո՛ւ… միայն դո՛ւ կարող էիր մտածել էդ ձևով… Մեծ ես, Լավրենտի։

ԲԵՐԻԱ.— Տե՛ս… Բաղիրով… մտքից չէր անցնի, որ Բաքվի արխատակրատ հայերը էս օրին կարող են հասնել… Հայը հային «ախպար» ասելով է հայհոյում։ Կանանց քած են ասում… Սա է պարադոքսալ փուլը։ Լավը վատ է դարձել, վատը՝ լավ։ Ստրուկների կեղտոտ հավաքածու… Իրենք իրենց դեմ։ Վերջանում է Հայաստանը, վերջանում է հայոց լեզուն…

ԲԱՂԻՐՈՎ.— Մե՛ծ ես, Լավրենտի… Պատմության մեջ ոչ ոքի մտքից չէր անցել էս ձևով ոչնչացնել ժողովուրդ…

ԲԵՐԻԱ.— Իսկ մենք ի՞նչ ենք. պատմություն չե՞նք...
ԲԱՂԻՐՈՎ.— Պատմություն ենք, Լավրենտի։

Երկուսով միասին ծիծաղում են։

ԲԵՐԻԱ.— Մենք զարգացնում ենք պատմության ոճը և հնարավորությունները։
ԲԱՂԻՐՈՎ.— Մենք կատարելագործում ենք մարդու տեսակը, նրան բարձրացնում ենք մի նոր աստիճանի։

Լույսը շեղվում է նրանց վրայից, և բեմը ընկղմվում է խավարի մեջ։ Ապա մի թերև լույսի տակ նշմարվում են գիշերվա պուրակը և նստարանների վրա քուն մտած ծայրենաղարձներ։ Քուն է մտել լացի այգին, և մեկ-մեկ լսվում են տենդոտ ու հոգնած խռմփոցներ։ Հանկարծ ներս է ընկնում Ստեփանը և տագնապահար շուրջը նայելով, դեռ մի կողմ թաքնվում, հետո՝ մյուս, ու արագ մտնում ծառերի արանքը։ Քիչ անց նույն անցքից մտնում է Քրեական խուզարկուն՝ ատրճանակը առաջ պարզած, ու նույնպես զգուշությամբ իր շուրջը նայելով, թաքնվում ծառերի մեջ։ Մի փոքր դադարից հետո խուզարկուն վերադառնում է և վերստին տնտղում չորս բոլորը. Ապա մոտենում է նստարանների վրա քնածներին ու մեկ-մեկ զննում դեմքերը, որի վրայից պիջակն է բարձրացնում, որի դեմքից՝ գլխարկը։ Ոչ մեկը նրա որոնածը չէ։ Գալիս է Անդոն։

ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Կորավ... Գետնի տակն անցավ։ (Նորից նայելով քնածների դեմքերին)։
ԱՆԴՈ.— Ախպարներից բացի մարդ չկա։ Դոկտն ինչ գործ ունի էստեղ։
ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Ես տեսա՝ նա այգի մտավ։ (Շուրջը նայելով)։ Արդեն քանի անգամ ձեռքիցս սպրծնում է։
ԱՆԴՈ.— Հաստատ ի՞նչն էր որ։
ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Արդեն մի շաբաթ է, ինչ էս այգում է լինում։
ԱՆԴՈ.— Էս այգին իմ տայրենն ա... Որ լիներ՝ ես հո քոռ չեմ։
ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Մեր սիգնալը սխալ չի լինում։ (Ծոցագրպանից հանում է լուսանկարն ու ձեռքի լապտերով լուսավորում)։ Կարո՞ղ է սխալ լինի...
ԱՆԴՈ (դեռ զարմացած, հետո քմծիծաղով).— Էս հո Ստեփանն է։
ԽՈՒԶԱՐԿՈՒ (խոժոռ).— Էս Դոկտն է, ընկեր լեյտենանտ...
ԱՆԴՈ (հետզհետե ներքուստ վերափոխվելով).— Դոկտո՞ն է, ասում ես... (Նորից նայելով լուսանկարին)։ Ա՜յ քեզ



Ստեփան... Արի ու բան հասկացիր։ Սուսուփուս, խելոք. միշտ Ուսանողի հետ դաս էր անում։
ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Ո՞ւմ հետ։
ԱՆԴՈ.— Ուսանողի... Էգուց էլի կլինի... Ես համոզված եմ։
ԽՈՒԶԱՐԿՈՒ.— Ո՞նց չէ... կլինի՜... Ձեր տայրենում չե՞ն ասում՝ ինչտա՞նից քացախ, ընկեր լեյտենանտ։ (Ձայնը բարձրացնելով)։ Դոկտո՞ն է... Չես հասկանո՞ւմ... Ռեցիդիվի՜ստ։ Համամիութենական ռոզիսկի մեջ է։
ԱՆԴՈ (ընկճված).— Քթիս տակ... Շա՜ն որդի։ (Մտածելով բորբոքվում է)։ Սաղ էս ախպարների մեղքն է... Լցվել են այգին։ Արի ու մեջները ջոկի... Սվոլոչնե՜ր...
ԽՈՒԶԱՐԿՈՒ (տնազով).— Մեջները ջոկի... Մուժիկ դերեվենսկի... (Հեռանում է)։
ԱՆԴՈ (որոշ ժամանակ նրա հետևից նայելով, հետո իր շուրջն է աչք ածում ու պոռթկում է).— Լցվե՜լ եք այգին... Սվոլոչնե՜ր... Ախպարնե՜ր... Էլ թացը չորից չենք կարող ջոկել... Արի հասկացի՝ որը որն է... (Մոտենում է նստարաններին ու քաշում քնածների վրայից վերարկուները, մի կողմ նետում գլխարկները, հարվածում նրանց, նստարանից ցած քաշում)։ Սվոլոչնե՜ր... Ջաթլախնե՜ր... Հավաքվել եք մկների նման...

Բոլորը արթնանում են։ Իրարանցում է։ Ընկածները բարձրանում են, դեռևս նստարաններին կառչողները վեր թռչում, պաշտպանվում զայրացած Անդոյից։

Սվոլոչնե՜ր... Էդ էիք ուզո՞ւմ... Ձեր պատճառով գործից պիտի հանեն... Ախպա՞ր սվոլոչնե՜ր... Դեռ կարող են կուսակցությունից էլ հանել... Սվոլոչներ, ես ձեր լավնուվատը...
ՀՈՌՆԱՀԱՅ (ծառերի արանքից).— Ի՞նչ է եղել, ընկեր Անդո։
ԱՆԴՈ.— Կորի՜ր աչքիցս... Գնա՜ որտեղից եկել ես... Սվոլո՜չ...
ՀՈՌՆԱՀԱՅ.— Կերթա՛մ, կերթա՛մ... Հանգարտվե...

Բոլորը արթնացած ու դեռևս քունը գլխներին փախչում են, ցրվում, և լացի այգին դատարկվում է։ Մնում է միայն Անդոն։ Ընկնում է նստարանին։

ԱՆԴՈ (ռոգնած).— Ես ձեր մարդ տարի...

Դադար: Սկսում է լուսանալ: Անդոն նույն կեցվածքով նստած է: Ասես ժամանակ չի անցել: Մտնում է Ուսանողը. Մինչև նրա մուտքը Անդոն, տեսնելով նրան, թաքնվում է ծառերի հետևում: Ուսանողը նստում է: Անդոն դուրս է գալիս իր թաքստոցից ու զգույշ մոտենում նրան: Ուսանողը շարունակում է թերթել ձեռքի գիրքը:

ԱՆԴՈ (սիրալիր, զգուշավոր, ձեռքը ատրճանակի վրա).— Բարի առավոտ...

ՈՒՍԱՆՈՂ.— Բարև, ընկեր լեյտենանտ:

ԱՆԴՈ.— Որ կողքիդ նստեմ՝ չե՞մ խանգարի:

ՈՒՍԱՆՈՂ.— Խնդրեմ:

ԱՆԴՈ.— Շնորհակալություն:

Նստում է նրա կողքին ու, ասես առաջին անգամ տեսնելով՝ ոտից-գլուխ հայացքով չափում է Ուսանողին, աչք գցում նրա գրքի մեջ:

ՈՒՍԱՆՈՂ.— Քաղտնտեսություն:

ԱՆԴՈ.— Քաղտնտեսություն... Հա, լավ է... (Դադար): Ամոթ չլինի հարցնելը՝ էդ ո՞ր ինստիտուտում են սովորում քաղտնտեսություն:

ՈՒՍԱՆՈՂ.— Համարյա բոլոր:

ԱՆԴՈ.— Դո՞ւ...

ՈՒՍԱՆՈՂ.— Ես՝ համալսարանում:

Դադար:

ԱՆԴՈ.— Ամոթ չլինի հարցնելը, էն քո ընկերը՝ Ստեփանը... Նա էլ է՞ համալսարանում սովորում:

ՈՒՍԱՆՈՂ (ժպտալով).— Չէ, Ինքն իրեն:

ԱՆԴՈ.— Էդ ո՞նց:

ՈՒՍԱՆՈՂ.— Ինքնակրթությամբ է զբաղվում:

ԱՆԴՈ (մեկուսի).— Ինքն իրեն կրթում է, ուրիշների հերն անիծում: (Ուսանողին): Բա քեզ հետ ի՞նչ գործ ունի... (Երկիմաստ): Օգնո՞ւմ ես:

ՈՒՍԱՆՈՂ.— Մեկ-մեկ օգնում եմ: Էսօր էլ պիտի հանդիպենք:

ԱՆԴՈ (աշխուժանալով).— Էստե՞ղ պիտի գա:

ՈՒՍԱՆՈՂ.— Հա: Ութին: (Ծուռը նայելով): Հիմա քանի՞սն է:



ԱՆԴՈ (նայելով Կառավարական տան կողմը).— Յոթն անց քառասուն:

ՈՒՍԱՆՈՂ.— Ուր որ է կգա:

ԱՆԴՈ (այլևս աշխուժացած).— Լավ կանի:

ՈՒՍԱՆՈՂ.— Քիչ ժամանակ է մնում: Կարող եմ ուշանալ դասերից: Նա ճշտապահ է:

ԱՆԴՈ.— Ափսոս: Անպայման սպասիր: Հա՞... Ես չխանգարեմ... Լավ է, որ ճշտապահ է: Դու չգնաս, սպասիր:

Անդոն մի կողմ է գնում, հեռանում այգուց, ապա հայտնվում է մի շատ աննկատելի տեղում ու թաքուն հետևում Ուսանողին:

Գալիս է, այգու շուրջբոլորը տնտղելով, Իրանահայր, հետո նույնպես զգուշությամբ մտնում է Հունահայր, ապա՝ 36 թ. հայրենադարձը, նրանց հետևից մտնում են հին և նոր հայրենադարձները, և Լացի այգին կրկին լցվում է մարդկանցով ու աշխուժանում: Այդ ընթացքում Անդոն ուշի-ուշով հետևում է յուրաքանչյուրին ու նայում ժամացույցին:

ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (36 թ. հայրենադարձին).— Ախպարին նշանակությունը իշտե գիտեմ, սակայն ավոլոշը տակավին չեմ սորված:

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ատիկա վատ խոսք չէ, նայած թե ինչ իմաստ կուտաս անոր: Չարենցը կսիրեր օգտագործել: Տեսակ մի զավեշտ կա մեջը: Երբեմն շատ սիրելին կըսեն:

ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ես ա՞լ կրնամ ավոլոշ ըսել:

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Նայած ում:

ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Զորօրինակ՝ ոստիկանին:

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խորհուրդ չեմ տար:

ԱՆԴՈ (ծառերի արանքում. մեկուսի).— Ճիշտ էլ անում ես:

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Մինչև չսորվիս տեղական բարբառը՝ ինքզինք շատ մի հավտար:

ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Իրա՞վ...

36 Թ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Այո, այ... Ինծ ալ մի հավատար:

ԱՆԴՈ (մեկուսի).— Մալադեց: Մինչև հայը սովետական երկրում չապրի՝ մարդ չի համարվի:

Լացի այգում մարդիկ շատանում են: Մեկը կարկանդակ է վաճառում: «Բաղդադի կարկանդա՞կ»... կանչում է նա: Մի քանի հոգի շրջապատել են «մատնոց» խաղացողներին: Այստեղ է նաև Կոլյա-

ռիստը: Մի ճանկով սառցում են նրա մկանները, իսկ Գնորդը տրևղում է նրա վերնաշապիկը:

ԳՆՈՐԴ (Կուլտուրիստին).— Ես քու տեղը լինեմ՝ տկլոր կմանգամ:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Խելքի պատառ: Ան իր մկաններով դրամ կվաստակե, խըտե... Երբ միշտ մերկ ըլլա՝ մարմինը ձրի կդիտեն, չէ՞ս հասկնար... Կհանվի՝ տասը ռուբլի, երբ կհագնվի ու նորեն կհանվի՝ նորեն տասը ռուբլի... Աս վերնաշապիկը վարագույրի պես է, խըտե... (Ծիծաղում է, ծիծաղում են մնացածներն էլ):

ԿՈՒԼՏՈՒՐԻՍՏ (նույնպես կատակով).— Ոչ: Այլևս ատ միջոցը ձեռք չի տար: Թիֆլիսեն տիկին մը եկեր էր, ըսավ՝ «Ուզում եմ մեր պարողան ազնվացնել»: Կիսառուսերեն ըսավ:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ըսածն ի՞նչ է, չեմ հասկնար:

ԳՆՈՐԴ.— Ինչի՞ չես հասկնա: Բուզա է ուզում, էլի... Բուզա գիտե՞ս ինչ է...

Բոլորը ծիծաղում են:

Հետո, դու ի՞նչ ասացիր:

ԿՈՒԼՏՈՒՐԻՍՏ.— Ըսի՝... (Ծիծաղում է): Ինչ-որ պետքն էր ըսի:

Նորից ծիծաղում են:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Է՛, ո՞ր մնաց:

ԿՈՒԼՏՈՒՐԻՍՏ.— Ըսավ՝ կերթամ Թիֆլիս, ընկերուհիս ալ կըղրկեմ...

Ծիծաղ:

ՄԵԾ ԳՐՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Սո՛, հիսուն տարի ետք Թիֆլիս ալ ուրիշ ցեղ չի մնար, ամբողջ քաղաքը քու կերպարանքովդ կըլլա:

Ծիծաղ:

ԳՆՈՐԴ (տնտղելով շրջապատի զգեստները, կոշիկները, փողկապները).— Հը՞... ի՞նչ տամ: (Նրան նետում են մի կողմ): Էդ փողկապդ չե՞ս ծախի...



ՓՈՂԿԱՊԻ ՏԵՐԸ.— Չէ՛, ծո... Ծախու բան չունիմ:

ԳՆՈՐԴ.— Զոռնես՝ կառնենք... Կապասեմ: (Մոտենում է սուսերամարտիկներով հայրենադարձին): Էդ կոշիկներդ գավեսկան հանի գեն դցի:

ՍՐՈՒՆՔԱՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ինչո՞ւ:

ԳՆՈՐԴ (շշուկով).— Կբռնեն:

ՍՐՈՒՆՔԱՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (ուշադրություն սևեռելով).— Ի՞նչ կըսես...

ԳՆՈՐԴ.— Սիրիր կքշեն:

ՍՐՈՒՆՔԱՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (երկյուղած).— Ի՞նչ պատճառով:

ԳՆՈՐԴ (շշուկով).— Դրանք դաշնակցական մինիստրներն էին հագնում:

ՍՐՈՒՆՔԱՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ.— Ասիկա քառասունյոթի արտադրանքն է, խըտե...

ԳՆՈՐԴ.— Ես ստիլի մասին եմ ասում:

ՍՐՈՒՆՔԱՊԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (բարկանալով).— Ես ստիլ-մստիլ չեմ գիտեր, քե... Վազ անցիր:

ԳՆՈՐԴ (կիսակատակ-կիսասպառնական).— Լավ... Դու գիտես... (Նկատում է Հունահային): Ախպար... Բարև... (Տնտղում է վրայի նեամաչ հագուստը): Չե՞ս ծախում...

ՀՈՒՆԱՀԱՅ (խնդումերես).— Հաճույքով... Ըսե ի՞նչ ծախեմ՝ ծախեմ... Ըսե:

Գնորդը, նրա վրա որևէ արժեքավոր բան չգտնելով, հեռանում է:

ՀՈՒՆԱՀԱՅ (նրա հետևից).— Հոս եկուր... Ո՞ւր կերթաս: Ծախեմ... Տունը հարյուր տարեկան մեծ հայրիկ ունիմ... Կառնե՞ս...

Հայրենադարձների մխորի մեջ, նրանց խառնում ինչ-որ մեկը սկսում է պարել: Մի զարմանալի իներեզ կենսուրախության է նամոկում ամբոխին. ամեն ինչ մոռացվում է: Կյանքը կա ի հեճուկս կացի այդու: Ուրախություններ նախծին է ու աղմկոտ:

ՈՒՍԱՆՈՂ (շուրջն է նայում, փակում գիրքը, մոտենում է խմբին ու աղմուկի մեջ ինչ-որ բան հարցնում նրանցից մեկին: Եվ այն բանից, որ այդ մեկը նայում է իր ժամացույցին ու պատասխանում Ուսանողին, հասկանալի է, որ ժամն էր հարցնում: Ուսանողը շտապ հեռանում է):

ԱՆԴՈ (ծառերի առանձնից դուրս գալով).— Ո՞ւր է գնում... Սպասիր մի քիչ էլ... Գնաց (գնում է Ոստանողի հետևից):

Պարն ու ստախոսությունը շարունակվում են: Եվ ամբոխի մեջ հայտնվում է Սպիտակ մորուքով հայը: Ինչպես միշտ, նա ձեռքը պարզած, «Վոսանկ» երգը երգելով, մարդկանց միջով առաջանում է ոչինչ չտեսնելով իր շուրջը:

Մարդիկ պապանձվում են: Մնում է միայն նրա երգը: Սպիտակ մորուքով հայը կանգնում է և դիմում իր առջևի զառանցությանը.

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Դու ինչո՞ւ հայտնվեցիր մեր ազգի մեջ... Դու մեզ դժբախտություն բերեցիր... Դու մեզ սարսափ գործեցիր...

ԳՆՈՐԴ.— Էս ո՞վ է ասում...

Մեծ գոլաններով Լիբանանանայր մատը տնկում է դեպի երկինք:

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Ասում եմ՝ մեր դժբախտության պատճառը չորանեմ քո մեջ... Ձո՞ւր եմ մեղավոր փրնտրում... (Փոքր դադար): Մեղա, Տեր Հիսուս Քրիստոս... Հազար անգամ մեղա...

ԳՆՈՐԴ.— Քրիստոսի հե՞տ է առևտուր անում...

ՄԵԾ ԳՈՐԳԱՆՆԵՐՈՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ (Գնորդին).— Սակն, ծո... գնվզեկ...

ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅ.— Գուցե մեր մեղքերը մե՞ծ են քո առջև... Միգուցե հեթանո՞ս պիտի մնայինք: Սխա՞լ էր Վարդանը... չղազա՞ր էր Վարդանը... (Փոքր դադար): Ասում եմ՝ Վարդանը քե՞զ հետ էր... Եվ ժողովուրդը հետևեց նրան, քանզի նրա ժողովուրդը քեզ հետ էր: Քո մարմնից ու արյունի՞ց էր... Եվ նա ուրիշ ճանապարհ չէ՞ր կարող ընտրել: Քանզի նրա ճանապարհը ընտրության ենթակա չէ՞... Ասում եմ՝ այդ ճանապարհը սկսվում է մեր արյան միջի՞ց... Եվ այն տանում է դրա՞խտ... Ես ճի՞շտ եմ քեզ լսում... (Փոքր դադար): Սակայն, Տեր իմ, այս դրախտը կոչվում է «Լացի այգի»: Քո ճանապարհը ես խաչի վրայով էր... Ուրեմն լացի այգին մեր դրախտի կայանն է... Եվ այս շոգեքարշը մեզ պիտի հասցնի դրա՞խտ... Այս շոգեքարշը մեր ճակատագիրն է, Տեր իմ, Հիսուս... (Նոչվելով ամբոխի կողմը, և քնելս առաջին



անգամ, նա իրենից բացի տեսնում է մարդկանց)... Հայ ժողովուրդ... Այս շոգեքարշը մեզ դրախտ պիտի տանի... Լացի այս գնացքը Լացի այգիի միջով մեզ դրախտ պիտի հասցնի: Սերը գնացքի, Լացի այգին մեր կայարանն է: Մեծ կայարանը: (Երգում է): Կասենք, մեր աշխարհն... (և այլն):

Լսվում է մեքենայի ճռինչ: Արագ ներս են ընկնում հողերամա-րանի յոթ պահակության ոստիկանները և ամուր բռնելով ՍՊԻՏԱԿ ՄՈՐՈՒՔՈՎ ՀԱՅԻ թևերից, դուրս տանում: Մեռնիկը շարունակում է երգել «Վոսանկը». Արդ ժամանակ բեմում տիրում է խոր լռություն: Եվ մարդիկ անշարժ են ու մտամոլոր. Ու հանկարծ սուլում է շոգեքարշը: Սղոցում է նրա չչակը, և նրա սրբերգական ծխերը ասես վերջ չունեն... մինչև կփակվի վարագույրը. Ու միայն վարագույրի ետևում ետևից մեղմանում է և հանգչում այդ երգը:

ՎԵՐՋ

1985